



А
В
В
А
В



ХУДОЖНИК

А
В
В
А
В



А
Ч
А
К
А
Н

В 1934 году я был десятилетним ребенком. Отец подарил мне книгу – огромный том произведений Туманяна. Форзац этой книги был сделан Тачатом Хачванкяном. Ничего более гениального я не представляю. Как было возможно на пусть даже больших, но всего лишь двух страницах отобразить все эпическое наследие Туманяна. Как он сумел все это разместить, этот большой художник... 62 года эта книга сопровождает меня. Я благодарен этому...

Академик Левон Ахурджян,




Публичное выступление на открытии выставки, посвященной 100-летию

Тачата Хачванкяна,

1996 год, Ереван, Национальная галерея Армении.

ХУДОЖНИК

А
Ч
А
К
А
Н




1934 թվականին Ես ստառ ստորևկան Երեվան Իր Էմ հայրը ինձ բերեալ
 նախ քան զիցրը՝ Էմու մանկանի մեծ հաստորը ։ Արդ զրբի հաստորը արեղ Էր
 Տաճաստ Խոստիաներյանը ։ Ես ոչինչ տվեի հանձնարեղ չեմ արտակրազնում
 Էն ինչպես կարելի Էր Երկրո, բնկրոզն մեծալիբ, Էլի վրա Էմու մանկանի
 սանրաղ Էլիկանան տակձագործորդու Էր արտանուսոնը ։
 Էնչպես Է ես տեղախրեղ, այդ մեծ արվեստագետը ։
 62 տարի Է այդ զիցրե ինձ ուզեկրում Է Ես շարեանկաղ եմ դրան ։

Արտեմիկրա Էստե Նախկերդան
 Տաճաստ Խոստիաներյանի 100 սանրակնե նախրիան
 գրոգանուեղեաի ըսգրման Երուրիեղ
 1996 թ., Էրևան, Նարտատմնի սագրալին արտակրազնուան

98974/1

ՆԿԱՐԻՔ



Ալբոմի կազմող, տեքստի և ծանոթագրությունների հեղինակ՝
Արթուր Ավագյան

Նկարների ծանոթագրված ցանկի համահեղինակ՝
Սեդա Խանջյան

Գիտական խմբագիր՝
Արարատ Աղասյան

Հայերեն թարգմանությունը՝
Աննա Ասատրյան

Լուսանկարիչ՝
Ջավեն Սարգսյան

Կազմի ձևավորումը՝
Կարեն Բալյան

Составитель альбома, автор текста и приложений
Артур Авакян

Соавтор аннотированного списка иллюстраций
Седя Ханджян

Научный редактор
Арарат Агасян

Перевод на армянский
Анна Асатрян

Фотограф
Завен Саркисян

Оформление обложки
Карен Бальян

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԿԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ
НАЦИОНАЛЬНАЯ ГАЛЕРЕЯ АРМЕНИИ

989411
7686



ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատարակչություն
Երևան 2007

Издательство Института искусств НАН РА
Ереван 2007

УДК 75/76(479.25)
ББК 85.153(2Ар)
X 290

**Գիրքը հրատարակվել է «Քաջագ» հիմնադրամի (ԱՄՆ) նյութական աջակցությամբ
Книга издана при финансовом содействии фонда “Каджаз” (США)**

Тачат Хачванкян. –
X 290 Ер.: Институт искусств НАН РА, 2007. – 164 с.

Գիրքը նվիրված է խորհրդային գրքարվեստի ռաիվիրաներից մեկի, ստալինյան բռնությունների զոհ դարձած տաղանդաշատ գրաֆիկ Տաճատ Խաչվանյանի (1896–1940) կյանքին և ստեղծագործությանը: Առաջին անգամ մանրամասն շարադրված է նկարչի կենսագրությունը, ներկայացված և քննության է առնված նրա հիմնական ժառանգությունը՝ գծանկարի, գրքարվեստի, պլակատի և գեղանկարչության բնագավառում: Հատուկ ուշադրություն է դարձված Տ.Խաչվանյանի ու հայ և ռուս մշակույթների նշանավոր գործիչներ Ե.Չարենցի, Հ.Կոջոյանի, Վ.Ֆավորսկու ստեղծագործական առնչություններին, տրված է արվեստագետի գործունեության պատմական գնահատականը: Գրքում զետեղված են մեծ թվով վերատպություններ, ինչպես նաև վավերագրական լուսանկարներ:

Книга посвящена жизни и творчеству одного из пионеров армянского советского книжного искусства, талантливого графика Тачата Хачванкяна (1896–1940), павшего жертвой сталинских репрессий. Впервые подробно изложена биография художника, представлено и проанализировано его основное наследие в области рисунка, книжного искусства, плаката и живописи. Особое внимание уделено творческим взаимосвязям Т.Хачванкяна и видных деятелей армянской и русской культур – Е.Чаренца, А.Коджояна, В.Фаворского, дана историческая оценка деятельности художника. В книге помещено большое число репродукций, а также документальные фотографии.

ББК 85.153(2Ар)

ISBN 99941-68-02-9

© Ա. Ավագյան, տեքստը, 2007
© Կ. Բալյան, կազմի ձևավորումը, 2007

© А.Авакян, текст, 2007
© К. Бальян, оформление обложки, 2007

Ժողովուրդը հնուց ի վեր որպես սրբություն է պաշտել մագաղաթի կամ թղթի վրա պատկերված բառը: Դա գնահատանքն էր նշակույթուն գրքի խաղացած հիրավի վիթխարի դերի՝ թեև գգալիորեն փոխված այն ժամանակներից, երբ բազմատպաքանակ հրատարակությունը դուրս մղեց ձեռագիր գիրքը:

Գրքարվեստը Հայաստանում ունի հարուստ ավանդույթներ, որոնք հասնում են միջնադարյան վարպետներին՝ գրիչներին, ծաղկողներին, կրոնական տեքստերի ձևավորողներին և նկարազարդողներին: Հեռավոր վանքերի ու ձեռագրատների կիսախավարում և լռության մեջ տառ առ տառ, տող առ տող, պատկեր առ պատկեր ծնվում էին գրքարվեստի անանց արժեքները, և մենք դեռևս երկար պիտի հիշենք դրանց հանճարեղ հեղինակներին՝ Թորոս Ռուսիմին, Սարգիս Պիծակին, Հակոբ Ջուղայեցուն:

Հայաստանում գրքարվեստը (արդեն՝ տպագիր) վերստին ծաղկեց անցյալ դարի 30-ական թվականներին. դա կապված էր բանաստեղծ եղիշե Չարենցի հրատարակչական գործունեության, նրա կողմից գրքերի նկարազարդման ու ձևավորման մեջ ներգրավված նկարիչների ստեղծագործության հետ: Այդ նախաձեռնությանը հայ կերպարվեստի երևելի վարպետներ Մարտիրոս Սարյանի և Հակոբ Կոչոյանի մասնակցությամբ էլ գրվեց հայկական գրքի գրաֆիկայի պատմության ամենավառ էջերից մեկը:

Գրքարվեստի բնագավառում ստեղծագործած նկարիչների շարքում էին նաև նրանք, ում վաստակած փառքի փոխարեն բաժին ընկավ դառը ճակատագիրը: Ոմանք, հայտնվելով իրենց մեծանուն ժամանակակիցների ստվերում և ըստ արժանվույն չգնահատվելով ու ճանաչում ձեռք չբերելով՝ մղվեցին երկրորդ պլան, ոմանք էլ, դառնալով ստալինյան ժամանակաշրջանի զոհեր, մոռացության մատնվեցին: Այսպես, հայրենական արվեստագիտությունը լոկ 1950-ականների վերջերին «հիշեց» տաղանդավոր գրաֆիկ Տաճատ Խաչվանքյանին, ում ստեղծագործությունը պաշտոնական քննադատության տեսադաշտից դուրս էր մնացել քսան երկար ու ծիգ տարիներ¹:

Տաճատ Խաչվանքյանը ծնվել է 1896 թվականի մարտին², Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի). այստեղ էլ անցում են նրա մանկության ու պատանեկության տարիները: Ապագա նկարչի հայրը՝ Հակոբ Խաչվանքյանը, հոգևորական էր, հայ եկեղեցու և ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, իսկ մայրը՝ Հռիփսիմե Արևշատյանը, դասավանդում էր մաթեմատի-

Издревле слово, начертанное на пергаменте или бумаге, почиталось в народе святыней. Так оценивалась роль, которую играет в культуре книга, – роль поистине колоссальная, хоть и немало изменившаяся с тех пор, как рукописную книгу вытеснил многотиражный кодекс.

Искусство книги имеет в Армении давние традиции. Восходят они к средневековым мастерам – писцам, переписчикам, оформителям, иллюстраторам канонических текстов. Буква за буквой, строка за строкой, лик за ликом рождались в отдаленных монастырях, в тиши и полумраке скрипториев непреходящие ценности книжного искусства, и мы еще не скоро забудем имена их гениальных создателей – Тороса Рослина, Саркиса Пицака, Акопа Джугаеци.

В 30-х годах прошлого столетия искусство книги (уже печатной) пережило в Армении новый расцвет, связанный с издательской деятельностью поэта Егише Чаренца, а также художников, привлеченных им к иллюстрированию и оформлению книг. Участие в этом начинании выдающихся мастеров армянского изобразительного искусства – таких как Мартирос Сарьян и Акоп Коджоян, вписало одну из ярчайших страниц в историю армянской книжной графики.

Но среди художников, работавших в этой области, были и такие, кому вместо заслуженной славы выпала незавидная судьба. Одни, оказавшись в тени своих именитых современников, отошли на второй план, не удостоившись подобающей оценки и признания; другие, став жертвами сталинской эпохи, были преданы забвению. Так, лишь к концу 1950-х годов отечественное искусствознание “вспомнило” о талантливом графике Тачате Хачванкяне, творчество которого оставалось вне поля зрения официальной критики долгие двадцать лет¹.

Тачат Хачванкян родился в марте 1896 года в Александрополе (ныне Гюмри)², где прошли его детство и юность. Отец будущего художника, Акоп Хачванкян, был священником, видным деятелем армянской церкви и национально-освободительного движения, мать, Рипсимэ Аревшатян, преподавала математику. Люди широкого культурного кругозора, они всячески стремились воспитать в детях трудолюбие и тягу к знаниям. Тачат среди них был старшим, имел пять братьев и сестру.

կա: Լինելով կուլտուրական լայն մտահորիզոնի տեր մարդիկ՝ նրանք հնրավորինս ջանում էին զավակների մեջ դաստիարակել աշխատասիրություն և ձգտում դեպի գիտելիքը: Տաճատը նրանց մեջ ավագն էր՝ ուներ հինգ եղբայր և մեկ քույր:

Ծնողները դժվար թե կռահեին իրենց որդու իսկական կոչման մասին՝ նրան ուսման ուղարկելով Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարան, որտեղ նա սովորեց ութ տարի: Դատելով բարձր գնահատականներից՝ առարկաների մեծամասնությունը նրան տրվում էր հեշտությամբ, նա լավ յուրացնում էր թե՛ հունանիտար և թե՛ ճշգրիտ գիտությունները: Ինչ վերաբերում է հետագայում որպես նկարչի նրան անհրաժեշտ առարկաներին, ապա դրանցից ուսումնարանում դասավանդվում էր նկարչություն, գծագրություն և զեղագրություն, այն էլ՝ ընդհանուր շարքում, հանրակրթական հաստատությունների սեղմ ուսումնական ծրագրերի շրջանակներում: Խաչվանքյանի ստեղծագործական ունակությունները դրսևորվեցին ավելի շուտ երաժշտության մեջ, քան պլաստիկ արվեստներում. դեռևս դպրոցական տարիներին նա յուրացնում է նոտային գրագիտությունն ու ֆլեյտա նվագել սովորում: Ավելին, առաջին անգամ որպես երաժիշտ նա առնչվում է իր հայրենի քաղաքի մշակութային կյանքում փուլանիշ դարձած իրադարձությանը. հընթացս Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի՝ 1912 թվականի օգոստոսի 4-ին Ալեքսանդրապոլում կայացած առաջնախաղի առևտրական ուսումնարանի սիրողական նվագախմբի կազմում կատարում է ֆլեյտայի նվագամասը³: Հետագայում Խաչվանքյանը յուրացնում է նաև դաշնամուրը, իսկ երաժշտության հանդեպ անկեղծ սերը նա պահպանում է ողջ կյանքում՝ փոխանցելով դստերը՝ երաժշտագետ Էվելինա Բայլանին⁴:

1911 թվականի աշնանը Տաճատը հոր և Մուշեղ եղբոր հետ այցելում է միջնադարյան Անի քաղաքի ավերակները, որտեղ ինտենսիվ հնագիտական հետազոտություններ էին կատարվում ակադեմիկոս Ն. Յա. Մառի ղեկավարությամբ: Հայաստանի հին մայրաքաղաքը, նրա ճարտարապետական շքեղությունը և պատմության կենդանի ոգին Խաչվանքյանների վրա անջնջելի տպավորություն են թողնում, ինչի մասին նրանք գրում են քաղաքի տպավորությունների հուշամատյանում⁵, իսկ Տաճատի նուրբ զեղարվեստական խառնվածքն ստանում է ոչ միայն ստեղծագործական ունակությունների զարգացման նոր ազդակ, այլև հայրենասիրական մեծ լիքը:

1915 թվականի մայիսին արժաթե մեդալով և առևտրի թեկնածուի կոչումով ավարտելով ուսումնարանի լրիվ դասընթացը՝ Խաչվանքյանն ընդունվում է Մոսկվայի Առևտրական ինստիտուտի Ալեքսանդրապոլի մասնաճյուղը: 1917 թվականին Հակոբ Խաչվանքյանը նշանակվում է Հայ առաքելական եկեղեցու Երևանի թեմի առաջնորդ. Տաճատը հարկադրված ընդհատում է ուսումնառությունը և ընտանիքի հետ տեղափոխվում Երևան:

Вряд ли родители подозревали об истинном призвании своего сына, отдавая его в Александропольское коммерческое училище, где тот проучился восемь лет. Судя по высоким отметкам, большинство дисциплин давалось ему с легкостью и он хорошо усваивал как гуманитарные, так и точные науки. Что касается предметов, которые пригодятся ему впоследствии как художнику, то из них в училище преподавались рисование, черчение и каллиграфия, но и те – в общем ряду, не более чем в рамках сжатых учебных программ общеобразовательных заведений. Впрочем, творческие способности Хачванкяна проявлялись поначалу скорее в области музыки, нежели пластических искусств: еще школьником он овладел нотной грамотой и научился играть на флейте. Более того, именно в качестве музыканта впервые прикоснулся к событию, ставшему вехой в культурной жизни его родного города: а именно в составе любительского оркестра коммерческого училища исполнил партию флейты на премьере оперы А. Тиграняна “Ануш”, состоявшейся 4 августа 1912 года в Александрополе³. В дальнейшем Хачванкян освоил также фортепьяно, а проникновенную любовь к музыке пронес через всю жизнь, сумев привить ее дочери, музыковеду Эвелине Бальян⁴.

Осенью 1911 года Тачат вместе с отцом и братом Мушегом посетил развалины средневекового города Ани, где в то время проводились интенсивные археологические исследования под руководством академика Н. Я. Марра. Древняя столица Армении, ее архитектурное величие и живой дух истории произвели на Хачванкянов неизгладимое впечатление, которым они поделились в журнале памятных записей города⁵, а тонкая художественная натура Тачата почерпнула не только новый импульс для развития творческих способностей, но и немалый заряд патриотизма.

В мае 1915 года, окончив полный курс училища с серебряной медалью и званием кандидата коммерции, Хачванкян поступил в александропольский филиал Московского коммерческого института. Однако в 1917 году, в связи с назначением Акопа Хачванкяна главой Эриванской епархии Армянской апостольской церкви, Тачат был вынужден прервать учебу и вместе с семьей перебраться в Эривань. Вскоре после этого он был призван на военную службу, где получил легкое ранение. Но факт этот не сыграл в его биографии сколько-нибудь значимой роли⁶. Гораздо более важным событием, надо полагать, было путешествие в Иран, которое он проделал в начале 1920-х годов с художником А. Коджояном. К сожалению, подробности этого путешествия до нас не дошли, но, зная, как ценил Хачванкян патриарха армянской советской графики, можно предположить, что общение с ним не прошло бесследно, укрепив в

Քիչ անց նա գորակոչվում է զինվորական ծառայության, որի ընթացքում թեթևակի վիրավորվում է: Սակայն այս փաստը նրա կենսագրության մեջ որևիցե նշանակալի դեր չի խաղացել⁶: Պետք է ենթադրել, որ առավել կարևոր իրադարձությունն էր 1920-ական թվականների սկզբին նկարիչ Հակոբ Կոջոյանի հետ նրա ուղևորությունը դեպի Իրան: Ցավոք, մեզ չեն հասել այդ ուղևորության մանրամասները, բայց, գիտենալով, թե ինչքան բարձր էր գնահատում հաջվանքյանը խորհրդահայ գրաֆիկայի պատրիարքին, դժվար չէ կռահել, որ նրա հետ շփումն անհետ չանցավ և ամրապնդեց արվեստով լրջորեն զբաղվելու հաջվանքյանի ցանկությունը:

Եվ, այդուամենայնիվ, նա նկարիչ դարձավ համեմատաբար ուշ: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից (1920) հետո հաջվանքյանը որոշ ժամանակ աշխատում է հաշվապահ և հաշվետար, այնուհետև Երևանի գեղարվեստական դպրոցում՝ որպես քարտուղար: Այստեղ նա ծանոթանում է գեղանկարիչներ Հովհաննես Տեր-Թադևոսյանի⁷, Սեդրակ Առաքելյանի և Վահրամ Գայֆեճյանի հետ: հաջվանքյանն արդեն յուրացրել էր գեղանկարն ու զօճանկարը⁸. այդ է վկայում նրա մասնակցությունը 1924 թվականին Հայաստանի կերպարվեստի աշխատողների ընկերության կազմակերպած Առաջին գարնանային ցուցահանդեսին: հաջվանքյանի ներկայացրած տասն աշխատանքներից դասախոսների ուշադրությունը գրավում են դիմանկարները: «Նրա ձեռքը վստահ է, նա ուշագրավն է տեսնում, ունի ձևի նուրբ զգացողություն, գծերը մաքուր են և արտահայտիչ», – սկսնակ գործընկերոջ մասին գրեց նկարիչ Գարիել Գյուրջյանը⁹:

Դեռևս մինչ այդ, նախախնամության կամոք, Տաճատը հանդիպել էր իր կյանքի ապագա ընկերուհուն՝ Եվգենյա Տեր-Խաչատրյանին, որը վճռական դեր խաղաց նրա նկարչական ինքնորոշման գործում: Պնդելով, որպեսզի ամուսինն ուսումնառությունը շարունակի Մոսկվայում, նա ոչ միայն ազատում է նրան յուրաքանչյուր երիտասարդ ընտանիքի կայացմանն ուղեկցող կենցաղային ամենատարբեր հոգսերից, այլև, մնալով Երևանում, աջակցում նրան նյութապես¹⁰:

1925 թվականին հաջվանքյանը մեկնում է Մոսկվա և ընդունվում Բարձրագույն գեղարվեստատեխնիկական արվեստանոցների (ՎԽՈՒՏԵՄԱՍ)՝ երկրի առաջատար ուսումնական հաստատությունը, որտեղ հնարավոր էր լուրջ, հիմնարար գիտելիքներ ստանալ կերպարվեստի և կիրառական արվեստների, նաև՝ ճարտարապետության բնագավառում: Աձելով նախահեղափոխական Ռուսաստանի նմանատիպ հաստատությունների համեմատ սկզբունքորեն այլ գաղափարական և սոցիալական հիմքի վրա՝ բուհն արմատապես վերափոխեց գեղարվեստական կրթության նախկին համակարգը՝ վճռի և հատիչի վարպետներին օժտելով հասարակական նոր գործառույթներով:

Ո՞րն էր ՎԽՈՒՏԵՄԱՍ-ի նորարարությունը:



Տաճատը (ձախից ծայրինը) եղբայրների՝ Մուշեղի, Հովհաննեսի, Արտակի և Վահեի հետ:
 Тачат (крайний слева) с братьями Мушегом, Ованесом, Артаком и Ваге.

Хачванкяне желание всерьез заняться искусством.

И все же художником он стал сравнительно поздно. После установления в Армении советской власти (1920) Хачванкяне некоторое время проработал бухгалтером и счетоводом, затем устроился секретарем в Эриванской художественной школе, где познакомился с живописцами Ованесом Тер-Татевосяном⁷, Седраком Аракелянном и Ваграмом Гайфеджяном. Уже тогда Хачванкяне владел живописью и рисунком⁸, о чем говорит его участие в Первой весенней выставке, организованной Обществом работников изоискусства Армении в 1924 году. Из десяти работ, экспонированных Хачванкяном, внимание рецензентов привлекли портреты. “Его рука уверенна, линии чисты и выразительны, он видит примечательное и обладает тонким чувством формы”, – писал о начинающем коллеге художник Габриэл Гурджян⁹. Для выставочного дебюта Хачванкяне такой отзыв был, безусловно, лестным, и не удивительно, что в каталогах последующих экспозиций Общества его имя встречается с неизменным постоянством.

Но еще до того судьба свела Тачата с будущей спутницей жизни Евгенией Тер-Хачатрян, которая сыграла решающую роль в его художническом самоопределении. Настояв на учебе мужа в Москве, она не только отстранила его от всевозможных житейских забот, сопутствующих становлению молодой семьи, но и поддерживала его материально, оставаясь в Эривани¹⁰.

В 1925 году Хачванкяне уехал в Москву и поступил в Высшие художественно-технические мастерские (ВХУТЕМАС) – ведущее в стране учебное заведение, где можно было получить серьезные, фундаментальные знания в области изобразитель-

Հայտնի է, որ 1917 թվականի Յուլյան օրացույցի հեղափոխությունը խորապես ցնցեց նախկին Ռուսական կայսրության ժողովուրդների ողջ կենսածը: Իր ճանապարհին հանդիպող բոլոր հնարավոր խոչընդոտները սրբող-մաքող տարերքի պես այն անցավ նաև իրենց սպառած սոցիալական, այդ թվում՝ մշակութային, ինստիտուտների վրայով: Խորհրդային պետության շինարարության պայմաններում արվեստն ստացավ բացառիկ նշանակություն, ընդ որում ոչ միայն գաղափարական, այլև՝ գործնական՝ ենթադրելով գեղարվեստական գործունեության և նյութապես օգտակար աշխատանքի սերտաճում: Արվեստագետը դադարում էր կյանքի հայեցող լինելուց և դառնում դրա սուբյեկտը, ակտիվ արարիչը, որին քաղաքական գրագիտության հետ մեկտեղ անհրաժեշտ էր գործնական «արհեստի» գերազանց տիրապետում: Պատմական մեծագործությունների իմաստը գիտակցող և հասարակությանը, ուր ապրում էր, ուղղակի օգուտ բերող արվեստագետի այս տիպը չէր կարող աճել դասավանդման ակադեմիական՝ նուրբ գեղապաշտությամբ, պահպանողականությամբ և էլիտար ինքնապարփականությամբ ներթափանցված համակարգի շրջանակներում:

Իր կառուցվածքով նախահեղափոխական ժամանակաշրջանի համանման գեղարվեստական հաստատություններից զարմանալիորեն տարբերվող Վեստերմուտ-ի մանկավարժական համակարգը համապատասխանում էր նոր պահանջներին: Սրանում իրավահավասար տեղ էին զբաղեցնում ստեղծագործական և արտադրական ֆակուլտետները՝ բացառելով արվեստների ավանդական աստիճանակարգը, դրանց բաժանումը «բարձրերի» և «ցածրերի»: Նախքան կոնկրետ մասնագիտություն յուրացնելը բուհի ուսանողները երկու (ավելի ուշ, 1926 թվականից՝ մեկ) տարվա ընթացքում սովորում էին Հիմնական բաժանմունքում, որտեղ, Լարիսա ժադովայի խոսքերով՝ «ձեռք էին բերում ընդհանուր գեղարվեստական կուլտուրա... ծանոթանում տարածական արվեստների հիմնական տեսակներին, դրանց ընդհանուր, միավորող գծերին և սպեցիֆիկ առանձնահատկություններին... ուսումնասիրում գեղարվեստական ձևագոյացման հիմնական տարրերն ու միջոցները՝ գույն, տարածություն, մակերես, ծավալ, ինչպես նաև հորինվածքային ստեղծագործության մեթոդներն ու լեզուն՝ համաչափությունները, ռիթմը, դինամիկան, հակադրությունները, առարկայական միջավայրի տեսողական ընկալման օրինաչափությունները»¹¹:

Ավարտելով Հիմնական բաժանմունքը՝ ուսանողն ընտրում էր կոնկրետ գեղարվեստական մասնագիտություն, որը սովորում էր հետագայում: Սկզբում խաչվանքյանին գրավում է գեղանկարչությունը, բայց ի վերջո նախապատվությունը տրվում է գրաֆիկային, քանի որ Վեստերմուտ-ի Գրաֆիկական (Պոլիգրաֆիական) ֆակուլտետում էին դասավանդում խաչվանքյանի կուռքերը՝ ռուս նշանավոր արվեստագետներ Վլադիմիր Ֆավորսկին և

նյի և կիրառական արվեստ, ապա արհիտեկտուրայի: Կրթական համակարգը հիմնականում համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Կրթական համակարգը հիմնականում համապատասխանում էր ժամանակի պահանջներին: Կրթական համակարգը հիմնականում համապատասխանում էր ժամանակի պահանջներին:

В чем же заключалась новизна ВХУТЕМАСа? Как известно, Октябрьская революция 1917 года глубоко потрясла весь жизненный уклад народов бывшей Российской империи. Словно стихия, сметавшая с пути всевозможные преграды, прошла она и по отжившим социальным институтам, в том числе культурным. В условиях строительства советского государства искусство приобретало исключительную значимость, причем не только идеологическую, но и практическую, предполагавшую тесное срастание художественной деятельности и материально полезного труда. Художник переставал быть созерцателем жизни и становился ее субъектом, активным творцом, которому наряду с политической грамотой необходимо было отлично владеть практическим “ремеслом”. Такой тип художника, ясно сознающего смысл исторических свершений и приносящего прямую пользу обществу, в котором он живет, не мог быть возвращен в рамках академической системы преподавания с ее рафинированным эстетизмом, консерватизмом и элитарной замкнутостью.

Новым требованиям отвечала педагогическая система ВХУТЕМАСа, который по своей структуре разительно отличался от аналогичных ему художественных заведений дореволюционного периода. Творческие и производственные факультеты занимали в нем равное положение, что исключало традиционную иерархию искусств, их деление на “высшие” и “низшие”. Прежде чем овладеть конкретной специальностью, студенты этого вуза в течение двух лет (позднее, с 1926-го – одного года) учились на Основном отделении, где, по словам Ларисы Жадовой, “приобретали общую художественную культуру... знакомились с основными видами пространственных искусств, с их общими, объединяющими чертами и с особыми специфическими качествами... изучали основные элементы и средства художественного формообразования: цвет, пространство, поверхность, объем, а также методы и язык композиционного творчества – пропорции, ритм, динамику, контрасты, закономерности зрительного восприятия предметной среды”¹¹.

По окончании Основного отделения студент выбирал конкретную художественную специальность, которой обучался впоследствии. Поначалу Хачванкяна привлекала живопись, но в конечном итоге предпочтение было отдано графике, так как на

Նիկոլայ Կուպրեանովը:

Պոլիգրաֆիական ֆակուլտետը ՎԽՄԵՄԱՍ-ի ուժեղագույն ֆակուլտետներից էր, որի տաղանդավոր դասախոսների (առաջին հերթին՝ Ֆավորսկու) ջանքերով ուսանողներին սպառնիչ գիտելիքներ էին մատուցվում տեսական և գեղարվեստական առարկաներից, գրքի հորինվածքի և կառուցման մշակույթի, պոլիգրաֆիական տարբեր տեխնիկաների օգտագործման վերաբերյալ: Հատուկ ուշադրություն էր դարձվում գծանկարին (որին կատարելապես տիրապետում էր ֆակուլտետի դասախոսների մեծամասնությունը), նաև՝ գործնական գիտելիքներին: Ուսանողի կողմից գրքի հիմնական կառուցվածքային տարրերի՝ շափկ, անվանաթերթ, էջկապ, տպատառ և այլն, յուրացման ընթացքում խրախուսվում էր պոլիգրաֆիական արվեստի սկզբունքների ինքնուրույն, վերլուծական իմաստավորման ունակությունը:

Վիմագրական բաժանմունքում, որն ընտրեց հաջվանքայնը¹², 1920-ական թվականների երկրորդ կեսին Կուպրեանովի հետ մեկտեղ դասավանդում էին ռուսական և խորհրդային գրաֆիկայի նշանավոր վարպետներ Դմիտրի Սորոը և Ալեքսանդր Դեյնեկան: Սակայն ֆակուլտետի դասախոսներից ամենամեծ ազդեցությունն ու հեղինակությունը վայելում էր Վ. Ֆավորսկին՝ գրքարվեստի ականավոր տեսաբանն ու պրակտիկը: Չնայած այն հանգամանքին, որ վիմագրական բաժանմունքի ուսանողների հետ նրա անմիջական շփումը սահմանափակ էր (Ֆավորսկին վարում էր ապագա փայտափորագրիչների հատուկ կուրսը), նա, այդուամենայնիվ, ողջ ֆակուլտետի գաղափարական աներկբա առաջնորդն էր: Ուստի նախքան հաջվանքայնի ուսանողական աշխատանքների մասին խոսելը, հարկ է համառոտ հիշատակել Ֆավորսկու գեղագիտական և ստեղծագործական որոշ սկզբունքներ մասին, որոնք նա տարեցտարի հետևողականորեն արմատավորում էր իր ուսանողների շրջանում:

Արվեստաբանական կրթությունը և գրքի գրաֆիկի վիթխարի փորձը Ֆավորսկուին հնարավորություն ընձեռեցին մշակելու գրքի՝ իբրև միասնական գեղարվեստական օրգանիզմի, սեփական տեսությունը, որի համաձայն գրքում նյութի տարածական-ժամանակային կազմակերպումը պետք է ենթարկվեր ամբողջական, մտածված պլաստիկ գաղափարին: «Գրքի գեղարվեստական կառուցվածքը, – պարզաբանում է ՎԽՄԵՄԱՍ-ի մասին կապիտալ աշխատության հեղինակ Սելիմ Խան-Մագոմեդովը, – մարդու կողմից ճանաչվում և յուրացվում է ժամանակի ընթացքում, ընթերցելու և դիտելու գործընթացում: Ուստի գրքի հորինվածքի մեջ մտնող բոլոր տարրերը՝ շափկ, ֆորզաց, անվանաթերթ, սկզբնազարդեր, բացվածքներ, վերջնազարդեր և այլն, ընթերցողն ընկալում է գրքի տարածության մեջ իր շարժման ընթացքում, երբ գրքի գրական բովանդակությունը և գեղարվեստական ձևավորումը մարդու համար միաձուլվում են որպես միասնական տարածական-ժամանակային գործընթաց»¹³:

графическом (полиграфическом) факультете ВХУТЕМАСа преподавали кумиры Хачванкяна – блистательные русские художники Владимир Фаворский и Николай Купреянов.

Полиграфический факультет был одним из сильнейших факультетов ВХУТЕМАСа. Усилиями его талантливых педагогов (в первую очередь Фаворского) студентам преподносились исчерпывающие знания по теоретическим и художественным дисциплинам, культуре композиции и конструкции книги, по использованию различных полиграфических техник. Особое внимание уделялось рисунку (которым в совершенстве владело большинство преподавателей факультета), а также практическим занятиям. При освоении студентом основных структурных элементов книги – обложки, титульного листа, верстки, шрифтов и пр., поощрялась его способность к самостоятельному, аналитическому осмыслению принципов полиграфического искусства.

На литографском отделении, которое выбрал Хачванкян¹², во второй половине 1920-х годов, помимо Купреянова, преподавали такие известные мастера русской и советской графики, как Дмитрий Моор и Александр Дейнека. Однако наибольшим влиянием и авторитетом из педагогов факультета пользовался В. Фаворский – выдающийся теоретик и практик книжного искусства. Несмотря на то что его прямое общение со студентами отделения литографии было ограничено (Фаворский вел специальные курсы будущих ксилографов), он, тем не менее, являлся несомненным идейным лидером всего факультета. Поэтому, прежде чем говорить о студенческих работах Хачванкяна, стоит вкратце коснуться некоторых эстетических и творческих принципов Фаворского, которые он как преподаватель из года в год последовательно внедрял среди своих студентов.

Искусствоведческое образование и колоссальный опыт книжного графика позволили Фаворскому разработать собственную теорию книги, которая рассматривалась им как единый художественный организм. Согласно этой теории пространственно-временная организация материала в книге должна быть подчинена цельной, продуманной пластической идее. “Художественная структура книги, – разъясняет автор капитального труда о ВХУТЕМАСе Селим Хан-Магомедов, – познается и осваивается человеком во времени, в процессе чтения и просмотра. Поэтому все элементы, входящие в композицию книги – обложка, форзац, титульный лист, заставки, развороты, концовки и т. д., воспринимаются читателем в процессе его движения в пространстве книги, когда литературное содержание книги и ее художественное оформление сливаются для человека в единый пространствен-

Նկարները, ինչպես որ գրքի ձևավորման զուտ դեկորատիվ տարրերը, Ֆավորսկին դիտում էր ֆունկցիոնալ և գեղագիտական սկզբունքների միասնության տեսակետից: Գրքի իսկական նկարչին, գտնում էր նա, անհրաժեշտ է հասնել լավագույն հավասարակշռության, օրինակ, «Միր իսկուստվա»-ի վարպետների գրաֆիկական ոճը պայմանավորող զարդամուլության և պատկերայնության լիակատար բացասման (ինչին հանգեցին կոնստրուկտիվիստները) միջև: Հավանաբար այդ էր պատճառը, որ 1920-ական թվականներին Վեստերմուտ-ի մյուս ֆակուլտետների համեմատ Պոլիգրաֆիկական ֆակուլտետն զգալիորեն պակաս չափով կրեց այն ժամանակ տարածված կոնստրուկտիվիզմի ազդեցությունը, թեև այդ ուղղության արձագանքները տեղ գտան որոշ դասախոսների՝ ի մասնավորի Ն. Կուպրեանովի, և ուսանողների՝ այդ թվում և Տ. Խաչվանքյանի, որոշ աշխատանքներում:

Բուհում սովորելու ընթացքում Պոլիգրաֆիկական ֆակուլտետի ուսանողները հիմնավորապես ուսումնասիրում էին ոչ միայն ընդհանուր տեսական ու գեղարվեստական առարկաներ, այլև իրենց ապագա մասնագիտության արտադրական ու տեխնոլոգիական ասպեկտները: Ըստ էության, Վեստերմուտ-ը ձևավորում էր գրքի նկարչի նոր տիպ, որը մեկ անձում միավորում էր ձևավորողին, կոնստրուկտորին և պոլիգրաֆիստին՝ մշակելով հրատարակության տիպը, գրքի կառուցվածքը, դրա դեկորատիվ ձևավորումը, նկարաշարը և դրանով իսկ պայմանավորում հրատարակման ոճն ամբողջությամբ:

Մոսկվայում խաչվանքյանն ստեղծում է բազմաթիվ նկարներ, որոնք հիմնականում մատիտով, նաև՝ ածուխով ու ջրաներկով արված գծա- և ճեպանկարներ են: Սրանք մեծ մասամբ առանց մոդելների դիմագծերի ճշգրտման վերարտադրում են մարդկային մերկ ֆիգուրներ տարբեր շարժումներում և դիրքերում, քաղաքային՝ գերազանցապես ճարտարապետական բնակարի տեսարաններ, ինչպես նաև անիմալիստական (կենդանական) մոտիվներ: Խաչվանքյանի ուսանողական գծանկարները, որպես կանոն, կրում են զուտ օժանդակ, կիրառական բնույթ և չունեն գեղարվեստական ինքնուրույն մշանակություն: Բայց և այնպես դրանց մեջ հանդիպում են առանձին գրաֆիկական թերթեր, որոնցում դրվում են և լուծում գտնում ստեղծագործական որոշակի խնդիրներ: Այդպիսին է, օրինակ, «Երևանի շուկան» փոքրադիր հորինվածքը (1927)՝ ստեղծված, ըստ երևույթին, դեպի Հայաստան նկարչի ամառային ուղևորությունների տպավորության տակ (նկ. 2): Այս անպաճույճ տեսարանի մոտիվը, որը ճշմարտացիորեն ներկայացնում է ոչ մեծ հարավային քաղաքի նահապետական կոլորիտը, հիմք դարձավ խաչվանքյանի «Երևանի շուկան (մեյդան)» հայտնի վիմագրության համար, որը կատարված է ասֆալտի վրա քերելու վիմագրական հազվագյուտ տեխնիկայով (նկ. 20):



Ե. Տեր-Խաչատրյանի հետ: 1920-ական թվականներ:
Ս. Ե. Թեր-Խաչատրյան. 1920-е годы.

но-временной процесс¹³. Иллюстрации, равно как и сугубо декоративные элементы оформления книги, рассматривались Фаворским с точки зрения единства функционального и эстетического начал. Настоящему художнику книги, считал он, необходимо добиться оптимального равновесия между стремлением к украшательству, определявшим, например, графический стиль мастеров “Мира искусства”, и полным отрицанием изобразительности, к чему пришли конструктивисты. Отчасти поэтому Полиграфический факультет ВХУТЕМАСа в 1920-е годы в гораздо меньшей степени испытал влияние распространенного в ту пору конструктивизма, чем другие факультеты, хотя это направление нашло отголоски в работах некоторых преподавателей, в частности Н. Купреянова, а также студентов, в том числе Т. Хачванкяна.

За время пребывания в вузе студенты Полиграфического факультета основательно изучали не только общетеоретические и художественные предметы, но также производственные, технологические аспекты своей будущей специальности. По сути, ВХУТЕМАС формировал новый тип художника книги, который объединял в одном лице иллюстратора, конструктора и полиграфиста, разрабатывая тип издания, конструкцию книги, ее декоративное оформление, иллюстрационный цикл и определяя тем самым стиль издания в целом.

В Москве Хачванкян создал множество рисунков. В основном это натурные студии и беглые зарисовки, выполненные карандашом, реже углем и акварелью. В большинстве своем они воспроизводят обнаженную натуру в различных движениях и позах, без уточнения портретных черт моделей,

Նույն տարիներին խաչվանքյանն առաջին անգամ իր ուժերն է փորձում գեղարվեստական գրականության ձևավորման բնագավառում. նկարազարդում է Ե. Չարենցի «Գիքորի երազը» հեքիաթը (1928), ձևավորում Կ. Տերենցի «Թավրիզը» և Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» գրքերը (երկուսն էլ՝ 1929): Գունավոր վիճագրության տեխնիկայով արված այս աշխատանքները նշանավորում են խաչվանքյանի վաղ ստեղծագործությանը բնորոշ գրաֆիկական ոճի ծնունդը: Հավելենք, որ «Թավրիզը» և «Լալվարի որսը» գրքերի ձևավորումները նա ներկայացրել էր որպես դիպլոմային աշխատանք:

Գրքերի հետ վատ վարվելու համար պատժված չարածճի տղայի մասին պատմությունը Չարենցը փոխադրել էր Ս. Մարշակի հեքիաթի մոտիվներով: «Գիքորի երազը» վերնագրով փոխադրության նկարները դարձան «ամենափոքրիկների համար» գրականության ձևավորման բնագավառում խաչվանքյանի անդրանիկ և միակ փորձը (նկ. 21–24): Ղատելով ըստ ամենայնի՝ նկարիչը հասկանում էր «ժանրի յուրահատկությունը», մանկական ընկալման առանձնահատկությունները՝ մտացածին դեմքերն ու իրավիճակները «ճանաչելու» ձգտումը և սերը վառ տեսողական կերպարների, ընդհանրացված, տիպական խարակտերների և գործողության դինամիզմի հանդեպ: Նկարներն առանձնանում են լակոնիկ գծանկարով և վառ գունային լուծմամբ, ինչն էլ դրանք մերժեցնում է խորհրդային պլակատի վաղ մոդելներին: Խաչվանքյանը ևս նկարազարդումներն ստեղծելիս հաշվի էր առնում այն հանգամանքը, որ դրանց անմիջական հասցեատերն իր տարիքի բերումով ավելի շուտ պիտի դիտեր «նկարները» և դրանցից քաղեր ոչ բարդ խրատը, քան թե կարդար տեքստը:

Կ. Տերենցի «Թավրիզը» գրքի համար խաչվանքյանը կատարել է, առնվազն, շապիկի երկու տարբերակ, որոնցից մեկն առանց էական փոփոխությունների կրկնել է հեղինակային քրոմովիճագրության մեջ (նկ. 27): Պահպանված նախանկարները տարբերվում են հորինվածքով, բայց դրանցում առկա են գեղանկարչական միևնույն տարրերն ու մոտիվները: Մահմեդական ծարտարապետությանը բնորոշ ձևերը՝ մզկիթի գմբեթը, աշտարակը, աղեղնածև կամարը, լայնարձակ հանդերձանքներով կանայք և տղամարդիկ, հեզ իշուկը, չալմաներն ու ֆեսերը միածուլվում են մերձավորարևելյան քաղաքի՝ որոշակի պայմանականությամբ և գրոտեսկի տարրերով օժտված, հավաքական կերպարում: Ակամա հիշվում են Հ. Կոջոյանի՝ դեպի Պարսկաստան և, մասնավորապես, Թավրիզ կատարված ուղևորությունների մոտիվներով արված տեմպերաները և գրաֆիկական թերթերը, որոնցում հիրավի փայլուն մարմնավորում է գտել արևելյան կենցաղի հեզնական և արտահայտիչ թատերայնությունը¹⁴:

Շապիկի վերջնական տարբերակում խաչվանքյանը դիմում է գեղարվեստական ինքնատիպ հնարքի՝ առջևի պլանում նշագ-

սենկի городского, преимущественно архитектурного пейзажа, а также анималистические мотивы. Студенческие рисунки Хачванкяна, как правило, носят сугубо вспомогательный, прикладной характер и не имеют самостоятельного художественного значения. Но среди них встречаются отдельные графические листы, в которых ставятся и получают разрешение определенные творческие задачи. Такова, например, небольшая по формату композиция под названием “Эриванский рынок” (1927), очевидно, созданная под впечатлением летних поездок художника в Армению (илл. 2). Мотив этой незатейливой сценки, так верно передающей патриархальный колорит небольшого южного города, лег в основу известной литографии Хачванкяна “Эриванский рынок (майдан)”, выполненной в редкой литографической технике выскребания по асфальту (илл. 20).

В эти же годы Хачванкян впервые пробует себя в сфере оформления художественной литературы: иллюстрирует сказку Е. Чаренца “Сон Гикора” (1928), оформляет книги К. Теренца “Тавризм” и В. Миракяна “Охота на Лалваре” (обе – 1929). Выполненные в технике цветной литографии, эти работы знаменуют рождение графического стиля Хачванкяна, характерного для его раннего творчества. Добавим, что оформления книг “Тавризм” и “Охота на Лалваре” были представлены им в качестве дипломной работы.

История о непослушном мальчике, наказанном за то, что он плохо обращался с книгами, была переложена Чаренцем по



Երևանի գեղարվեստա-արդյունաբերական դպրոցի ուսուցիչ Ս. Առաքելյանի (ներքևի շարք, ձախից՝ երրորդը) և նրա կուրսի ուսանողների հետ: Նույն շարքում. ձախից երկրորդը՝ Տ. խաչվանքյան, աջից ծայրինը՝ ռեժիսոր Վ. Աճեմյան: 1924 թվական: *Вместе с преподавателем эриванской художественно-промышленной школы С. Аракеляном (нижний ряд, третий слева) и студентами его курса. В том же ряду второй слева – Т. Хачванкян, крайний справа – режиссер В. Аджемян. 1924 год.*

ծում է հիմնական հերոսների խոշոր ֆիգուրները, բայց չի պատկերում, այլ «մոդելում» է դրանք հագուստի՝ դեպի վար իջնող և մարդկային մարմնի ռեալ ձևերը քողարկող ծալքերով: Դրանով իսկ ստեղծվում է երկակի տպավորություն. մի կողմից՝ ֆիգուրներն ընկալվում են շոշափելիորեն և ծավալուն, հատկապես պատի նման ուղղանկյուն մակերեսի ֆոնի վրա, մյուս կողմից՝ ասես անհետանում են, տարրալուծվում դրանում: Պայմանականորեն է լուծված նաև դեպի կամարային որմնախորշով, աշտարակով և գմբեթով նշված մզկիթն ուղևորվող մոլլայի ֆիգուրը: Գունային լրկալ բծերի և խիստ երկրաչափական ձևերի, կարճ ու կտրուկ ուրվանկարների և նուրբ խաչածակող ստվերազծման համադրումը հորինվածքին հաղորդում է դեկորատիվ հնչողություն: Մի շարք հատկանիշներով սա մերձենում է կոմստրուկտիվիստական գրքային գրաֆիկայի նմուշներին, որի ազդեցությունը 1920-ական թվականներին կրեցին խորհրդային գրաֆիկներից շատերը, դրանց թվում՝ վիմագրական բաժանմունքում խաչվանքյանի դասախոս Ն. Կուպրեանովը:

Վ. Միրաբյանի «Լալվարի որսը» պոետիկ դրաման ծնվեց անցյալ դարի սկզբին և լայն ճանաչում բերեց հեղինակին: Սրանկարագարդումները կարելի է դասել գրքարվեստի ասպարեզում խաչվանքյանի առավել հաջողված աշխատանքների թվին: Արվեստագետը նրբորեն զգաց բանաստեղծական լեզվերի ոգին, նրա ինքնատիպ գեղեցկությունն ու ոճը: Գրքի՝ ջրաներկով կատարված շապիկը (նկ. 28) կրում է էպիկական բնույթ և պատկերում Գուգարքի վեհաքանչ բնությունը, լանջերն անառիկ լեռների, որոնցից մեկին միաձուլվել է նախնիների սրբազան ավանդույթների հպարտ պահպան Ավագի՝ ժայռի պես հզոր կերպարը: Անտեսանելի գետով սահող ասես նիրհած Ավարդի՝ մեղմ թախծով համակված պատկերը, նրբագեղ քարայծերը՝ սիրահարների այդ պարզամիտ խորհրդանիշը, հորինվածքի մեջ են ներմուծում նուրբ-մարմնագույն, կանաչ և կապույտ գույներով «հնչյունավորված» լրացուցիչ քնարական տոներ: Ընդհանուր տպավորությունն ամբողջացվում է տպատառի զուսպ գծագրությամբ և հորինվածքը մասնատող հորիզոնական գծերով. շապիկն ստեղծում է հուզական տրամադրություն, որն ուղեկցում է մեզ ընթերցանության ընթացքում¹⁵:

Գրքի բացվածքին նկարիչը պատկերել է պոետի բարձրակետը՝ հարսանիքի տեսարանը (նկ. 29): Այստեղ արդեն այլ տրամադրություն է իշխում: Մենք ներգրավվում ենք ժողովրդական աղմկոտ տոնակատարության մթնոլորտ, ուր տարիքն առած տղամարդիկ, ունկնդրելով երաժիշտների նվազը, քեֆ են անում և բաժակաճառեր արտասանում, խայտաբղետ զգեստներով կանայք պար են բռնել, իսկ երիտասարդ ձիավոր-կտրիճները, մրցելով խիզախության մեջ, սուրում են սրարշավ: Խնջույքի մասնակիցներից մեկը, չզսպելով իրեն, վեր է թռչում և պարում, մյուսն էլ՝ բնորոշ ժեստով կանչում է մնացածներին: Ու թեև հեռվում, հե-

մոտիվա՝ սկզբից Ս. Մարշակի. Իլյուստրացիոն կ շոտո քերոլոյոնոյոն, բայց չի պատկերում, այլ «մոդելում» է դրանք հագուստի՝ դեպի վար իջնող և մարդկային մարմնի ռեալ ձևերը քողարկող ծալքերով: Դրանով իսկ ստեղծվում է երկակի տպավորություն. մի կողմից՝ ֆիգուրներն ընկալվում են շոշափելիորեն և ծավալուն, հատկապես պատի նման ուղղանկյուն մակերեսի ֆոնի վրա, մյուս կողմից՝ ասես անհետանում են, տարրալուծվում դրանում: Պայմանականորեն է լուծված նաև դեպի կամարային որմնախորշով, աշտարակով և գմբեթով նշված մզկիթն ուղևորվող մոլլայի ֆիգուրը: Գունային լրկալ բծերի և խիստ երկրաչափական ձևերի, կարճ ու կտրուկ ուրվանկարների և նուրբ խաչածակող ստվերազծման համադրումը հորինվածքին հաղորդում է դեկորատիվ հնչողություն: Մի շարք հատկանիշներով սա մերձենում է կոմստրուկտիվիստական գրքային գրաֆիկայի նմուշներին, որի ազդեցությունը 1920-ական թվականներին կրեցին խորհրդային գրաֆիկներից շատերը, դրանց թվում՝ վիմագրական բաժանմունքում խաչվանքյանի դասախոս Ն. Կուպրեանովը:

Для книги К. Теренца “Тавриз” Хачванкян выполнил, по меньшей мере, два варианта обложки, один из которых без значительных изменений был повторен в авторской хромофотографии (илл. 27). Сохранившиеся эскизы различаются по композиции, но в них фигурируют одни и те же изобразительные элементы и мотивы. Характерные формы магометанской архитектуры – купол мечети, вышка минарета, стрельчатая арка, фигуры облаченных в просторные одеяния женщин и мужчин, кроткий ослик, чалмы и фески сливаются в собирательный образ ближневосточного города, трактованный с изрядной долей условности и элементами гротеска. Невольно вспоминаются выполненные по мотивам путешествий в Иран, и в частности в Тавриз, темпера и графические листы А. Коджояна, в которых ироничная и экспрессивная театрализация восточного быта нашла поистине блистательное воплощение¹⁶.

В окончательном варианте обложки Хачванкян прибегает к оригинальному художественному приему: намечает на первом плане крупные фигуры основных персонажей, но не изображает их, а “моделирует” складками ниспадающей одежды, которая словно скрывает реальные формы человеческого тела. Тем самым создается двойственное впечатление: с одной стороны, фигуры воспринимаются осязаемо и объемно, особенно на фоне прямоугольной поверхности, похожей на стену, а с другой – будто бы исчезают, растворяясь на этом фоне. Условно решена также фигура муллы, который направляется в мечеть, обозначенную арочным проемом, башней и куполом. Сочетания локальных цветовых пятен и строгих геометрических форм, лаконичных силуэтов и тонкой перекрестной штриховки придают композиции декоративное звучание. По ряду признаков она сближается с образцами конструктивистской книжной графики, влияние которой в 1920-е годы испытали многие советские графики, в том числе и педагог Хачванкян по отделению литографии Н. Купреянов.

տին պլանում փոփոխված Լոռվա լանդշաֆտի համայնապատկերը դիտողի հայացքը տանում է դեպի խորք, սակայն հորինվածքն առանձնանում է դեկորատիվ ամբողջականությամբ՝ հոյակապ համապատասխանելով էջկապին և եզրագարդելով բանաստեղծական տեքստի երկու ոչ մեծ սյունակները¹⁶։

Այս աշխատանքները պետք է որ գրավեին խաչվանքյանի դասախոսների ուշադրությունը, որոնց մոտ նա միշտ լավ համարում ուներ։ Պատմում են, որ ուսումնառության տարիներին խաչվանքյանը մտերմացել էր Ֆավորսկու հետ, որն էլ նրան առաջարկեց մնալ Մոսկվայում և անգամ հանձն առավ օգնել աշխատանքի տեղավորման և բնակարանի հարցում։ Նման հեռանկարը, բնականաբար, երիտասարդ նկարչին շատ բան էր խոստանում թե՛ կենցաղային, թե՛ ստեղծագործական առումով։ Խորհրդային գրաֆիկայի վարպետների (ամենից առաջ՝ հենց Ֆավորսկու) հետ կողք-կողքի աշխատելու, մայրաքաղաքի գեղարվեստական կյանք մուտք գործելու և մասշտաբային ստեղծագործական նախագծերի իրականացմանը (մասնավորապես՝ միլիոնավոր ընթերցողներին մատչելի գրքերի ձևավորմանը) մասնակցելու հնարավորությունը նա չէր կարող անտեսել։ Սակայն խաչվանքյանի իսկական կոչումը հայրենիքում ապրելն ու արարելն էր, ուր ձգտում էր ամբողջ հոգով և ուր ուղևորվեց ինստիտուտն ավարտելուց անմիջապես հետո։

Վերադառնալով Երևան՝ խաչվանքյանն աշխատանքի է անցնում Հայպետհրատում՝ որպես տեխնիկական խմբագիր։ Միաժամանակ նա դասավանդում է Երևանի գեղարվեստա-արդյունաբերական տեխնիկումում (վարում է գրաֆիկայի և պլակատի դասընթացները) և Պետական պոլիտեխնիկական ինստիտուտում, ուր նրան հրավիրել էր ճարտարապետ Ալ. Թամանյանը¹⁷։ խաչվանքյանն ակտիվորեն ներգրավվում է հանրապետության գեղարվեստական կյանք (որի հետ կապը չէր ընդհատել Մոսկվայում գտնվելու ընթացքում), նրա աշխատանքները կանոնավորապես երևում են ցուցահանդեսներում։ Հայտնվելով ազգային մշակույթի ակադեմիայի գործիչների շրջապատում՝ խաչվանքյանը մտերմանում է նրանցից շատերի, այդ թվում՝ Ե. Չառենցի, Կ. Հալաբյանի¹⁸, Մ. Սարյանի, Գ. Գյուրջյանի, Ռ. Իսրայելյանի հետ՝ բարձր գնահատվելով նրանց կողմից որպես մարդ և արվեստագետ։ Շուտով խաչվանքյանն ստեղծագործական միջավայրում ձեռք է բերում լայն ճանաչում¹⁹։

Նախքան 1930-ական թվականներին գրքի գրաֆիկայի ասպարեզում նկարչի կոնկրետ աշխատանքներին անդրադառնալը՝ անհրաժեշտ ենք համարում համառոտ պատմել այդ տարիներին խորհրդային գրաիրատարակչության և գրքարվեստի բացառիկ ծաղկման նախադրյալների մասին։

Արդեն 1920-ական թվականների վերջին խորհրդային արվեստը նշանակալիորեն հեռացել էր հետիոկտեմբերյան առաջին տարիներին իր բնույթը պայմանավորող գաղափարագեղագի-

Поэтическая драма В. Миракяна “Охота на Лалваре” родилась в самом начале прошлого века и принесла своему автору широкое признание. Иллюстрации к ней можно отнести к числу наиболее удачных работ Хачванкяна в области книжного искусства. Художнику удалось тонко прочувствовать дух поэтической легенды, ее самобытную красоту и стиль. Обложка книги (илл. 28), выполненная акварелью, несет эпическое начало и рисует величавую природу Гугарка, склоны его неприступных гор, с одной из которых слит образ мощного, как утес, Авака – гордого хранителя заветных традиций предков. Облик словно бы уснувшей и плывущей по невидимой реке Алвард, овеванный тихой печалью, грациозные серны – этот бесхитростный символ возлюбленных, привносятся в композицию дополнительные лирические тона, “озвученные” также цветом – нежно-телесным, зеленым и синим. Общее впечатление довершается сдержанной графикой шрифта и членящих композицию горизонтальных линий; обложка задает эмоциональный тон, который будет сопровождать нас при чтении¹⁵.

На развороте книги художник изобразил кульминационный момент поэмы – сцену свадьбы (илл. 29). Здесь уже царит иное настроение. Мы вовлекаемся в атмосферу шумного народного праздника, где мужчины постарше, внимая игре музыкантов, пируют и произносят тосты, женщины в пестрых одеждах кружат веселый хоровод, а молодые всадники-смельчаки, состязаясь в удали, мчатся во весь опор. Один из пирующих, не удержавшись, вскочил и пустился в пляс, другой характерным жестом зазывает остальных... И хотя вдаль, на заднем плане, расстилается панорама лорийского ландшафта, уводящая взгляд зрителя вглубь, композиция отличается декоративной цельностью, прекрасно согласуясь с версткой и окаймляя два небольших столбца стихотворного текста¹⁶.

Эти работы должны были привлечь внимание педагогов Хачванкяна, у которых он всегда был на хорошем счету. Рассказывают, что в годы учебы Хачванкян сдружился с Фаворским, который предлагал ему остаться в Москве и даже обещал помочь с трудоустройством и жильем. Разумеется, такая перспектива многое сулила молодому художнику как в бытовом, так и в творческом отношении. Возможность работать бок о бок с мастерами советской графики (прежде всего с самим Фаворским), влиться в художественную жизнь столицы и принимать участие в осуществлении масштабных творческих проектов (а именно: в оформлении книг, доступных миллионам читателей) не могла им не учитываться. Однако свое истинное призвание он видел в том, чтобы жить и работать на родине, куда его влекло всей душой и куда он отправился сразу по окончании института.

տական և ստեղծագործական սկզբունքներից: Խորհրդային արվեստի ռաիվիրաների հռչակած հեղափոխական ռեֆորմների ոգին աստիճանաբար մարում էր: Ամբողջատիրական հասարակության ձևավորումը մշակույթին թելադրում էր ազատ գեղարվեստական փորձարարությունների տրամաբանության և ավանգարդիզմի ռճաբանության հետ անհամատեղելի, միանգամայն կոնկրետ գաղափարական առաքելություն: Ստեղծագործության մեջ պլանաչափորեն դուրս էր մղվում անցյալի հետ կապերը վճռականորեն խզելու և արմատական նորույթի պահանջը, քանզի դա չէր արժանանում լայն հանդիսատեսի պաշտպանությանը, ինչին ապավինում էին կուսակցական ղեկավարությունը և արվեստագետների զգալի մասը:

Արվեստի նկատմամբ պետական վերահսկողության խստացումն իր արտացոլումը գտավ ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ի որոշման մեջ, որով հայտարարվեց երկրում եղած այլևայլ գրական-գեղարվեստական կազմակերպությունների արձակման և ստեղծագործական միությունների ստեղծման մասին: Իսկ ևս երկու տարի անց Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում պաշտոնական գեղարվեստական մեթոդ հռչակվեց դեպի կոմունիստական գաղափարայնությունը և հանրամատչելի պլաստիկ ձևը կողմնորոշված «սոցիալիստական ռեալիզմը»:

Այդ տարիների գեղարվեստական քաղաքականության շրջանակներում ծնունդ էր առնում մի բնորոշ միտում արդիական էր դառնում մշակութային ժառանգությանը, լայնորեն հասկացված «կլասիկային» դիմելը, որը կոչված էր ամրապնդել հասարակության գեղագիտական կողմնորոշման վեկտորը: «Կլասիկայում» Խորհրդային արվեստը ձեռք էր բերում անհրաժեշտ հող, նեցուկ, որից նրան զրկել էին «ձախ» գեղարվեստական հոսանքների նիհիլիստական կոնցեպցիաները: Դրանց բանավիճային հակազդեցությունը պարունակում էր ստեղծագործական նոր ծրագիրը: Մշակույթի գաղափարախոսների մատուցմամբ «կլասիկան» իմաստավորվեց որպես Խորհրդային արվեստի նախապատմություն, ուղի, որն անհրաժեշտ էր անցնել դեպի պատմագեղարվեստական զարգացման բարձրակետը՝ «սոցիալիստական ռեալիզմը», արագորեն բարձրանալու համար²⁰:

Դեպի անցյալը ծրագրային վերադարձը կրում էր ընդհանուր մշակութային բնույթ. 1920-ական թվականների ժամանակավոր դժվարություններից հետո երկրում վերջապես կարգավորվել էր դասագրքերի լույս ընծայումը, բարձրացել կրթական միջին ցեղը, ակտիվացել համաշխարհային գրականության հուշարձանների հրատարակման աշխատանքը: Դադարելով ընտրյալների սեփականությունը լինելուց՝ գրքերն այժմ հրատարակվում էին բազմահազար տպաքանակներով, մտնում բնակչության ամենալայն խավերի գործածության մեջ և ձեռք բերում աննախադեպ լիազորություններ ընթերցող զանգվածների լուսա-



Մոսկովյան առևտրական ուսումնարանի ուսանող S. Խաչվանջյանը: 1915 թվական: Студент Московского коммерческого училища Т. Хачванкян. 1915 год.



Աշխատելիս: ՎԽՄԵՄԱՍ: 1920-ական թվականների երկրորդ կես: За работой. ВХУТЕМАС. Вторая половина 1920-х годов.

Փո արիезде в Эривань Хачванкян устроился на работу в Госиздате Армении в качестве технического редактора. Одновременно он преподавал в Эриванском художественно-промышленном техникуме (где вел курсы графики и плаката) и Государственном политехническом институте, куда был приглашен архитектором А. Таманяном¹⁷. Хачванкян активно включился в художественную жизнь республики (связь с которой не прерывал и в бытность свою в Москве), работы его регулярно появлялись на выставках. Оказавшись в кругу выдающихся деятелей национальной культуры, Хачванкян сблизился со многими из них, в том числе с Е. Чаренцем, К. Алабяном¹⁸, М. Сарьяном, Г. Гюрджяном, Р. Исраэляном, был высоко оценен ими как человек и художник. Вскоре Хачванкян приобрел известность в творческой среде¹⁹.

Но прежде чем коснуться конкретных работ художника в области книжной графики, созданных им в 1930-е годы, стоит вкратце рассказать о предпосылках необычайного расцвета советского книгоиздания и книжного искусства, который пришелся на это время.

Уже к концу 1920-х годов советское искусство значительно отошло от идейно-эстетических и творческих принципов, определявших его характер в первые послеоктябрьские годы. Дух революционных обновлений, провозглашенный пионерами советского искусства, постепенно угасал. Формирование тоталитарного общества диктовало культуре вполне конкретную идеологическую миссию, несовместимую с логикой свободных художественных экспериментов и стилистикой авангардизма. Установка на решительный разрыв с прошлым и радикальную но-

989711

Վ. Ֆավորսկու (երկրորդ շարք, ձախից երրորդը) արվեստանոցում: Վերևի շարքում աջից երրորդը՝ Տ. Խաչվանքյան: 1920-ական թվականների երկրորդ կես: В мастерской В. Фаворского (второй ряд, третий слева). В верхнем ряду третий справа – Т. Хачванкян. Вторая половина 1920-х годов.



վորության և գեղագիտական դաստիարակության գործում: Այս ամենը խթանում էր գրքարվեստի՝ ստեղծագործական ուժերի ներդրման արժանի դաշտի, արագ զարգացումը: Գրքային գրաֆիկայի յուրահատկությունը, նրա պլաստիկական լեզվի առանձնահատկությունները, գրքի գեղագիտական «տարածության» հայտնի պայմանականությունը նկարիչներին ընծեռում էր ինքնարտահայտման լրացուցիչ՝ ստեղծագործության առավել գաղափարականացված հաստոցային և մոնումենտալ ձևերի բնագավառում աներևակայելի ազատություն: Չարմանալի չէ, որ գրքի ստեղծման գործընթացն այդ տարիներին գրավում էր ոչ միայն գրքի գրաֆիկայի վարպետներին, այլև ավելի լայն պրոֆիլի նկարիչների: Նմանատիպ երևույթ կարելի է նկատել նաև ժամանակի գրական պրակտիկայում. խորհրդային խոշորագույն գրողները գնում էին թարգմանչության ոլորտ՝ հայրենական գրականությանը ներկայացվող գաղափարական-թեմատիկ պահանջներից զեր փոքր-ինչ խուսաճապելու նպատակով:

1930-ական թվականներին գրաիրատարակչական մշակույթն աննախադեպ բարձր մակարդակի հասավ նաև Հայաստանում: Դրանում վճռական դեր խաղաց եղիշե Չարենցը, որի բազմակողմանի տաղանդն այստեղ ևս գտավ իր փայլուն դրսևորումը: Պետիրատում բանաստեղծն աշխատեց յոթ տարի. սկզբում՝ որպես շարքային աշխատակից (1928–1930), ապա՝ գեղարվեստական գրականության բաժնի վարիչ (1930–1935): Այդ

վիզու և творчестве планомерно вытеснялась, ибо не имела поддержки широкого зрителя, к которому апеллировало партийное руководство, да и большинство самих художников.

Ужесточение государственного контроля над искусством отразилось в известном постановлении ЦК ВКП(б) от 23 апреля 1932 года, объявлявшем о роспуске имевшихся в стране литературно-художественных организаций и создании единых творческих союзов. А еще через два года на Первом всесоюзном съезде советских писателей в ранг официального художественного направления был возведен «социалистический реализм», ориентированный на коммунистическую идейность и общедоступную пластическую форму.

В рамках художественной политики тех лет зарождалась характерная тенденция: актуальным становилось обращение к культурному наследию, к широко понятой «классике», призванной закрепить вектор эстетической ориентации общества. В «классике» советское искусство обретало необходимую почву, опору, которой его лишили нигилистические концепции «левых» художественных течений. Полемическую реакцию на них содержала новая творческая программа. С подачи идеологов культуры «классика» была осмыслена как предыстория советского искусства, как путь, который надлежало пройти в стремительном восхождении к высшей точке историко-художествен-

կարճ ժամանակահատվածում անգամ նա հասցրեց որոշիչ ավանդ բերել XX դարի հայ գրքարվեստի կայացմանը²¹ :

Հազվագյուտ երախտապարտ ընթերցող և կրթոտ գրասեր Չարենցը լավ էր հասկանում գրքի էությունը, ֆունկցիոնալ և գեղագիտական յուրահատկությունը: Լայն մտահորիզոնը, ծավալուն հումանիտար գիտելիքները, անբասիր ճաշակը և բանաստեղծական սուր զգացողությունը՝ զուգակցված հախուռն ու եռանդուն բնավորության հետ, օգնեցին նրան արագորեն հաստատվել նոր ասպարեզում՝ հրատարակչական գործում և շուտով դառնալ դրա իսկական գիտակ՝ հաջողությամբ իր մեջ միահյուսելով տեսաբանի ու պրակտիկի հատկանիշները: Մարդկանց հրապուրելու և ոգևորելու, նրանց հետ ընդհանուր լեզու գտնելու և գործողության մղելու հարցում Չարենցին օգնում էին ոչ միայն կրակոտ խանդավառությունը, այլև կազմակերպական արտասովոր ունակությունները: Ընդ որում գրքի վրա կատարվող աշխատանքում բանաստեղծի մասնակցությունը չէր սահմանափակվում ընդհանուր ղեկավարությամբ: Ընդհակառակը, խորանալով ամենաբարդ հարցերի և նրբերանգների մեջ, նա, Սարյանի խոսքերով՝ «զարմանալի նուրբ դիտողություններ կաներ ձևավորողին, տեխնիկական խմբագրին, կազմարարին, կարճ ասած՝ բոլորին, ովքեր կապ ունեին գրքի ստեղծման հետ»²²:

Բանաստեղծի ժամանակակիցները միահամուռ ընդգծում էին նրա ապշեցուցիչ գիտելիքները կերպարվեստի պատմության բնագավառում, ինչը, Սարյանի վկայությամբ, «գիտեր մասնագետի պես»²³: Նկարիչը հիշում է, որ Չարենցը մշտապես այցելում էր ցուցահանդեսներ, ուշադիր և երկար դիտում ցուցամուշները, բայց առավել սիրում էր մասնակցել քննարկումներին և ստեղծագործական բանավեճերին, որոնց ընթացքում, ելույթ ունենալով, համոզիչ օրինակներ էր բերում դասական և ժամանակակից արվեստի պատմությունից: Իսկ XX դարի գեղարվեստական մշակույթը բանաստեղծի սիրելի թեման էր: Քննադատի արտասովոր ծիրքով օժտված Չարենցն անվրեպ զգում էր կերպարվեստի արտահայտչական յուրահատկությունը, նրա զանազան տեսակների և ժանրերի առանձնահատկությունները և կարողանում տեսականորեն հիմնավորել իր միտքը: «Այն, ինչ կոչվում է «գրքի էսթետիկա», – գրում է Սարյանը, – Չարենցի համար, ասես, մասնագիտություն լինելը»²⁴:

Այս ամենը Չարենցին հնարավորություն ընձեռեց Պետհրատում միավորել գրքարվեստով զբաղվելու ցանկություն ունեցող և համապատասխան ծիրքով օժտված առավել տաղանդավոր նկարիչներին: Ոմանց համար (օրինակ՝ Կոչոյանի և Սարյանի) դա արդեն քաջածանոթ բնագավառ էր, մյուսների համար՝ համեմատաբար սակավ ծանոթ: Սակայն բոլորն էլ ներգրավվեցին Չարենցի ազդեցության ուղեծրում (ինչը չէր բացառում նաև հակադարձ ազդեցությունը), և նրանցից շատերի համար բանաստեղծի

նոր զարգացման ուղի – կ'«социалистическому реализму»²⁰.

Программный возврат к прошлому носил общекультурный характер: после временных затруднений 1920-х годов в стране был наконец налажен выпуск учебников, повышался средний образовательный ценз, активизировалась работа над изданием памятников мировой литературы. Перестав быть достоянием избранных, книги теперь издавались многотысячными тиражами, входили в обиход самых широких слоев населения и обретали невиданные полномочия в деле просвещения и эстетического воспитания читательских масс. Все это подталкивало интенсивное развитие книжного искусства, которое виделось достойным полем приложения творческих сил. Специфика книжной графики, особенности ее пластического языка, известная условность эстетического «пространства» книги давали художникам дополнительную свободу самовыражения, немислимую в области более идеологизированных станковых и монументальных форм творчества. Не удивительно, что процесс создания книги в те годы привлекал не только мастеров книжной графики, но и художников более широкого профиля. Аналогию тому можно наблюдать в литературной практике тех лет: крупнейшие советские писатели шли в переводчики, пытаясь таким образом хоть как-то уклониться от идейно-тематических требований, предъявляемых отечественной литературе.

В 1930-е годы культура книгоиздания достигла небывало высокого уровня также и в Армении. Решающую роль в этом сыграл Егише Чаренц, многогранный талант которого и здесь нашел блистательное применение. В Госиздате поэт проработал семь лет, сначала рядовым сотрудником (1928–1930), а затем уже руководителем отдела художественной литературы (1930–1935). Но и за этот недолгий срок он успел внести определяющий вклад в становление армянского книжного искусства XX века²¹.

На редкость благодарный читатель и страстный любитель книги, Чаренц хорошо понимал ее природу, ее функциональную и эстетическую специфику. Интеллектуальный кругозор, обширные гуманитарные познания, безупречный вкус и обостренная поэтическая интуиция наряду с импульсивным, энергичным характером помогли ему быстро утвердиться на новом поприще, коим являлось для него издательское дело, а вскоре стать его подлинным знатоком, успешно соединявшим в себе черты теоретика и практика. Увлекать и воодушевлять людей, находить с ними общий язык и побуждать их к действию Чаренцу помогали не только пламенный энтузиазм, но и незаурядные организаторские способности. При этом участие поэта в работе над книгой не исчерпывалось общим руководством. Напротив, вдаваясь в самые сложные вопросы и нюансы, он, по словам Сарьяна,

տեղծի հետ աշխատելու տարիները դարձան արտակարգ բեղմնավոր: Չնայած իր կարճատևությանը, «Չարենցի ժամանակաշրջանը» որպես առանձին բաժին մտավ հայկական գրահրատարակչության պատմության մեջ:

Թեև Հայաստանի Պետհրատում հաջվանքյան զբաղեցնում էր տեխնիկական խմբագրի պաշտոնը, ըստ էության, նա գրքի նկարիչ էր բառի ամենալայն իմաստով. միաժամանակ ձևավորող, մակետավորող և պոլիգրաֆիստ, որը մշակում էր հրատարակության տիպը, գրքի կառուցվածքը, նրա դեկորատիվ ձևավորումը, նկարաշարը: Նման բազմակողմանիության հիմքում գրքի՝ որպես գրականության, գրաֆիկական և պոլիգրաֆիան ներառող սինթետիկ արվեստի, հանդես մտեցումն էր: Այսօր կարելի է փաստել, հայ իրականության մեջ հաջվանքյանն առաջիններից էր, ով կանգնած էր գրքի դիզայնի ակունքներում, եթե դրա տակ հասկանանք օգտակար առարկայի՝ գրքի ամբողջական գեղագիտական կազմակերպումը:

1930-ական թվականներին, սերտորեն համագործակցելով Ե. Չարենցի հետ, հաջվանքյանն ստեղծում է գրքարվեստի բնագավառում իր գլխավոր աշխատանքները, որոնք հանդիսացան նրա հիմնական ներդրումը խորհրդահայ գրաֆիկայի զարգացման մեջ: հաջվանքյանը նկարազարդում է ու ձևավորում հայ, ռուս և արտասահմանյան դասական և ժամանակակից գրողների՝ Ե. Օտյանի, Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Հ. Թումանյանի, Ե. Չարենցի, Ա. Վշտունու, Վ. Վաղարշյանի, Ա. Ս. Պուշկինի և այ-

“делал удивительно тонкие замечания оформителю, техническому редактору, переплетчику, короче, всем, кто имел отношение к созданию книги”²².

Современники поэта почти в один голос отмечают его поразительную эрудицию в области истории изобразительного искусства, которую он, по свидетельству Сарьяна, “знал как специалист”²³. Художник вспоминает, что Чаренц постоянно посещал выставки, где внимательно и подолгу рассматривал экспонаты, но больше всего любил принимать участие в обсуждениях и творческих дискуссиях, в ходе которых, выступая, приводил убедительные примеры из истории классического и современного искусства. Что же касается художественной культуры XX века, то она была для поэта излюбленной темой. Безошибочно чувствуя выразительную специфику изобразительного искусства, особенности пластического языка различных его видов и жанров, Чаренц обладал незаурядным даром критика и умел теоретически обосновать свою мысль. “То, что называется “эстетикой книги”, – пишет Сарьян, – было для Чаренца словно специальностью”²⁴.

Все это позволило Чаренцу объединить в Госиздате наиболее талантливых художников, имевших желание и способности заниматься книжным искусством. Для одних (например, для Коджояна и Сарьяна) это была уже изведанная область, для других – сравнительно малознакомая. Но все они вовлекались в



ՎսՈՒՏԵՄԱՍ-ի ուսանողների ու դասախոսների հետ:
Տ. հաջվանքյանը՝ վերևի շարքում ձախից: 1920-ական թվականների երկրորդ կես:
Среди студентов и преподавателей ВХУТЕМАСа.
Т. Хачванкян – в верхнем ряду слева. Вторая половина 1920-х годов.

լոց երկերը: Ու թեև Խաչվանքյանին առավել հոգեհարազատ էր գեղարվեստական գրականությունը և, մասնավորապես, պոեզիան, սակայն նա բազմիցս անդրադարձել է հասարակական-քաղաքական, գիտական և այլ գրականության ձևավորմանը: Աչքի ընկնելով նախանձելի աշխատասիրությամբ՝ նկարիչն իր կարծատև ստեղծագործական կենսագրության ընթացքում ձևավորեց տասնյակ հեղինակների ստեղծագործություններ, ընդ որում առանձին հրատարակությունների վրա առիթ ունեցավ աշխատելու հայկական գրաֆիկայի վարպետներ Կոջոյանի և Սարյանի հետ: Այսպես, Պ. Դուրյանի քնարերգության հատորյակում որպես ճակատագարող նա օգտագործել է բանաստեղծի՝ Կոջոյանի կողմից արձաթի վրա փորագրության տեխնիկայով արված գրաֆիկական դիմանկարը, իսկ Սարյանի (որին է պատկանում կազմը) հետ համատեղ ձևավորել է հանճարեղ աշուղ Սայաթ-Նովայի²⁵ հայերեն խաղերի ժողովածուն: Երբեմն որևէ հրատարակության աշխատանքներում ներգրավվում էին մի քանի նկարիչներ՝ Մարքսի «Կապիտալը», օրինակ, Խաչվանքյանը ձևավորել է Կոջոյանի և Դանչոյի (Ե. Գաբուզյան) մասնակցությամբ: Կոջոյանը կատարել է գրքի՝ հեղինակի դիմանկարով գլխազարդը, իսկ Դանչոն՝ կազմաշապիկը: Խաչվանքյանն ինքը մշակել է ֆորզացն ու անվանաթերթը:

Յետևելով Ֆավորսկու կոնցեպցիային՝ Խաչվանքյանը գիրքը դիտում է որպես ամբողջական գեղարվեստական կառուցվածք, որտեղ հավասարապես կարևոր են ոչ միայն նկարները, այլև ձևավորման բոլոր տարրերը: Երևի թե դրանով է բացատրվում այն փաստը, որ Խաչվանքյանի ձևավորած մեծ թվով հրատարակությունների մեջ հանդիպում է ընդամենը երկու գիրք, որոնցում նա հանդես է գալիս նաև որպես էջային «լիարժեք» նկարների հեղինակ: Մասնավորապես, դա Ա. Ս. Պուշկինի հայերեն թարգմանությունների հատորյակն է՝ նվիրված բանաստեղծի մահվան 100-ամյա տարելիցին, և 1938 թվականին հրատարակված՝ Վ. Վաղարշյանի «Սասունցի Դավիթ» դրամատիկական պոեմը: Մնացած դեպքերում Խաչվանքյանի նկարներն անմիջականորեն ներառվում են հրատարակության կառուցվածքի մեջ՝ տեղավորվելով շապիկներին, սուպերշապիկներին, ֆորզացներին, անվանաթերթերին, ֆրոնտիսպիսներին և գլխաթերթերին, ինչպես նաև բուն էջկապում՝ գրքի գլխազարդերի, վերջնազարդերի և գլխատառերի տեսքով: «Նկար» ասելով՝ մենք նկատի ունենք ֆիզուրատիվ-թեմատիկ պատկերները՝ բաց թողնելով զարդանկարը, որը Խաչվանքյանի մոտ կարևոր դեր է կատարում գրքի գեղարվեստապլաստիկական կերպարի ստեղծման գործում: Ոչ պակաս մշանակալի գործառույթներ է նա հատկացնում զուտ պոլիգրաֆիկական միջոցներին՝ լուսանցքների և էջկապի հարաբերակցությանը, տպատառի ընտրությանը, տեքստի ռուբրիկավորմանը:

Առանձին խումբ են կազմում Խաչվանքյանի այն գրքային

орбиту влияния Чаренца (что не исключало и обратного влияния), и для многих из них годы работы с поэтом были чрезвычайно плодотворны. Несмотря на свою кратковременность, “эпоха Чаренца” отдельной главой вошла в историю армянского книгоиздания.

В Госиздате Армении Хачванкян занимал должность технического редактора, но, по сути, он являлся художником книги в самом широком смысле этого слова: одновременно иллюстратором, макетчиком и полиграфистом, разрабатывающим тип издания, конструкцию книги, ее декоративное оформление, иллюстративный цикл. В основе такого универсализма лежал подход к книге как к синтетическому искусству, включающему литературу, графику и полиграфию. Сегодня можно сказать, что Хачванкян был одним из тех, кто в армянской действительности стоял у истоков книжного дизайна, если под этим понимать целостную эстетическую организацию утилитарного предмета – книги.

В 1930-е годы, тесно сотрудничая с Е. Чаренцем, Хачванкян создает свои главные работы в области книжного искусства. Они-то и составляют его основной вклад в развитие армянской советской графики. Хачванкян иллюстрирует и оформляет произведения армянских, русских и зарубежных писателей – как классиков, так и современников: Е. Отяна, П. Дуряна, М. Мецаренца, О. Туманяна, Е. Чаренца, А. Вштуни, В. Вагаршяна, А.С. Пушкина и др. И хотя художественная литература и особенно поэзия были наиболее близки Хачванкяну, ему неоднократно приходилось обращаться также к оформлению общественно-политической, научной и иной литературы. Отличаясь завидным трудолюбием, художник за свою недолгую творческую биографию оформил произведения десятков авторов, причем над отдельными изданиями имел случай работать вместе с мастерами армянской графики Коджояном и Сарьяном. Так, в одномомнике лирики П. Дуряна он использовал в качестве фронтисписа графический портрет поэта, выполненный Коджояном в технике гравюры по серебру, а совместно с Сарьяном (которому принадлежит переплет) оформил сборник армянских песен гениального ашуга Саят-Новы²⁵. Иной раз к работе над изданием привлекалось сразу несколько художников: “Капитал” Маркса, например, был оформлен Хачванкяном при участии Коджояна и Данчо (Е. Габузына), первый из которых исполнил виньетку с портретом автора, второй – суперобложку; сам же Хачванкян разработал форзац и титульный лист.

Следуя концепции Фаворского, Хачванкян рассматривал книгу как целостную художественную структуру, где одинаково важны все элементы оформления, а не только иллюстрации. Возможно, этим объясняется тот факт, что среди большого количества изданий, оформленных Хачванкяном, встречаются

ձևավորումները, ուր զգացվում է արվեստի քարոզչական-զանգվածային տեսակների (ամենից առաջ՝ պլակատի և կինոգովազդի), ինչպես նաև կոմստրուկտիվիզմի գեղագիտական սկզբունքների ազդեցությունը: Դրանք հիմնականում ժամանակակից հեղինակների (Արաքս, Ա. Վշտունի, Եգոր, Խ. Հրաչյան) ստեղծագործությունների՝ 1931 թվականին վերաբերող ձևավորումներն են, որոնք առանձնանում են կոչական ինտոնացիաներից ոչ զուրկ, երբեմն երգիծական երանգավորմամբ վառ և ընդհանրացված կերպարայնությամբ, արտահայտչամիջոցների ժխտությամբ, հորինվածքի գրաֆիկական և գունային բնութագրի լակոնիզմով: Այդ ամենը հիշողության մեջ արթնացնում է հետհեղափոխական առաջին տարիների խորհրդային քարոզչական արվեստի նմուշները, մասնավորապես պլակատի «խորդուբորդ» («перваый») և ոչուրըմբռնելի լեզուն: Մինևույն ժամանակ մասշտաբների համադրումը, ուրվագծերի դինամիզացիան և ռիթմական կրկնությունները, տպատառի և հորինվածքի ոչ պատկերային տարրերի կիրառումը հանգեցնում են ոճական զուգահեռների՝ կոմստրուկտիվիստների աշխատանքների հետ. նրանք էլ իրենց ֆորմալ որոնումներում ձգտում էին պարզության և կերպարի խիստ ֆունկցիոնալ արտահայտչականության:

Այս տեսակետից ցուցադրական օրինակ է Ազատ Վշտունու «Խոսում է ռադիո Ալժիրը» երգիծական պոեմի ձևավորումը (նկ. 33): Շապիկի հորինվածքում, խախտելով գործողության տեղի և

всего две книги, в которых он выступает также как автор “полноценных” страничных иллюстраций. В частности, это однотомник армянских переводов А.С. Пушкина, приуроченный к 100-летию со дня кончины поэта, и драматическая поэма В. Вагаряна “Давид Сасунский”, изданная в 1938 году. В остальных случаях иллюстрации Хачванкяна непосредственно включаются в структуру издания, помещаясь на обложках и суперобложках, форзацах и титулах, фронтисписах, шмуцтитулах, а также в самой верстке в виде заставок, концовок и буквиц. Под словом “иллюстрации” мы подразумеваем фигурно-тематические изображения, опуская орнамент, который у Хачванкяна играет важную роль в создании художественно-пластического образа книги. Не менее значимые функции он отводит сугубо полиграфическим средствам – соотношению полей и верстки, выбору шрифта, рубрикации текста.

Отдельную группу составляют книжные оформления Хачванкяна, в которых сказалось влияние агитационно-массовых видов искусства (прежде всего плаката и кинорекламы), а также эстетических принципов конструктивизма. В основном это оформления произведений армянских советских авторов (Аракс, А. Вштуни, Егор, Х. Рачьян), относящиеся к 1931 году. Эти работы отличает яркая и обобщенная образность, не лишенная призывных интонаций, а подчас имеющая



Տպագրական հաստոցի մոտ: ՎԽՈՒՏԵՄԱԱ: Վերին ծախանկումնում S. Խաչվանքյանն է: 1920-ական թվականների երկրորդ կես: За печатным станком. ВХУТЕМАС. В левом верхнем углу – Т. Хачванкян. Вторая половина 1920-х годов.

ժամանակի միասնականության սկզբունքը, հաջվանքյանը միավորում է հաստոցային նկարի պայմաններում անհամադրելի, բայց պակաստի շրջանակներում համատեղելի պատկերավորման տարրեր և մոտիվներ, այդ թվում՝ երևակայական ռադիոակտիվներ և Աֆրիկայի քարտեզը: Ընդամենը մեկ-երկու բծերով, գաղութարարի և շեյխի՝ մայրցամաքի այդ «իսկական տերերի» (որոնց առջև որպես կենդանի պարիսպ կանգնած է զինվորների շարասյունը) բավական պայմանական նշված կերպարները ծածկում են Աֆրիկայի գրեթե ողջ տարածությունը: Հորինվածքն անցնում է շապկի հակառակ կողմը, որտեղ «քաղցր կյանքի» տեսարանները հակադրությամբ փոխարինվում են «աշխատանքի ծանրության տակ տքնած» մտրակվող բանվորների կերպարներով: Դիտողի հայացքն իրենց վրա են բևեռում պարող և նստած զույգի՝ գրչի մեկ շարժումով, թեթև և նրբագեղ գծված ֆիգուրները: Չնայած ծայրահեղ լակոնիկ գրաֆիկական եղանակին, հեղինակը վերարտադրել է ոչ միայն հագուստների և սանրվածքների բնույթը, այլև պարի համաչափ «պատկերը»: Կրկնության մոտիվը, բազմիցս օգտագործվելով հորինվածքում, այն հագեցնում է բարբախուն ռիթմով: Դեռևս նախքան պոեմն ընթերցելը մենք ներգրավվում ենք նրա կերպարային աշխարհը, համակվում նրա հուզական տրամադրությամբ:

Արաքսի «Ձիմնի» գրքի շապիկը հաջվանքյանը նույնպես ձևավորել է՝ չանտեսելով կոնստրուկտիվիստների փորձը (նկ. 30): Իր կոմպոզիցիոն կառուցվածքով շապիկը ծայնակցում է «Թավրիզը» գրքի՝ նկարչի կողմից երկու տարի առաջ ստեղծած շապիկին: Այստեղ հիմնական տոնը տալիս են զույնով հակադիր խիստ ուղիղ գծերը և պատկերավորման խնդիրներից ազատ ճիշտ, «կոնստրուկտիվ» ձևերը, որոնք, հատվելով ու իրար վրա շերտ-շերտ դարսվելով, թեթևակիորեն խախտում են հորինվածքի ընդհանուր ուղղահայաց ռիթմը և նրան հաղորդում ներքին շարժում: Վեպի հերոսուհու՝ ասես լուսաբռնկմամբ լուսավորված դեմքը կրկնվում է երկու անգամ փոքր ու խոշոր պլանով, մասշտաբների համարձակ համադրմամբ: Նմանակելով չգիտես՝ ֆոտոմոնտաժ, թե՛ կինոֆորմիկան «կրկնվող կադրի» եղանակով, որտեղ երևակվում է աղջկա դեմքը, հաջվանքյանը հետևում է կոնստրուկտիվիստներին, որոնք փորձում էին դուրս գալ կերպարվեստի արտահայտչական հնարավորությունների շրջանակներից՝ դիմելով այլ արվեստների՝ մասնավորապես լուսանկարչության և կինեմատոգրաֆի ֆորմալ զինանոցին: Միայն թե տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ թե իրական սինթեզի, ինչպես, ասենք, Ա. Ռոդչենկոյի և Լ.Լիխիցկու ֆոտոմոնտաժներում, այլ դրա պայմանական մեմոնակման հետ:

Ձևով առավել զուսպ, բայց ժամանակի ոճական միտումների տեսակետից ոչ պակաս արտահայտիչ է հաջվանքյանի մեկ ուրիշ աշխատանք՝ Խորհրդային Հայաստանի 11-ամյակին նվիրված ցուցահանդեսի կատալոգի շապիկը (նկ. 31): Թղթի մակերեսի կա-

սатирическую окраску, скупость выразительных средств, лаконизм графической и цветовой характеристики композиции. Все это вызывает в памяти образцы советского агитационного искусства первых послереволюционных лет, в частности «шершавый» и доходчивый язык плаката. В то же время сопоставление масштабов, динамизация контуров и ритмические повторы, активное использование шрифта и неизобразительных элементов композиции наводят на стилистические параллели с работами конструктивистов, которые в своих формальных поисках стремились к простоте и строго функциональной выразительности образа.

С этой точки зрения показательным примером является оформление сатирической поэмы Азата Вштуни «Говорит радио Алжир» (илл. 33). В композиции обложки, нарушая принцип единства времени и места действия, художник объединяет несопоставимые в условиях станковой картины, но совместимые в рамках плаката изобразительные элементы и мотивы, в том числе воображаемые радиоволны и карту Африки. Намеченные весьма условно, одним-двумя лаконичными пятнами, образы колонизатора и шейха – этих «истинных хозяев» континента (перед которыми живой оградой навтыжку стоит шеренга солдат) заслоняют собой почти все его пространство. Композиция переходит на оборот обложки, где сценки «сладкой жизни» контрастно сменяются горестными образами «тянущих ляльку», понукаемых кнутом рабочих. Взгляд зрителя приковывают фигуры танцующей и сидящей пары, выписанные легко и грациозно, одним движением пера. Несмотря на крайне лаконичную графическую манеру, автору удалось передать не только характер костюмов и причесок, но и размеренный «рисунки» танца. Мотив повтора, неоднократно обыгранный в композиции, насыщает ее пульсирующим ритмом. Еще до чтения поэмы мы вовлекаемся в ее образный мир, проникаемся ее эмоциональным настроением.

Обложку книги Аракс «Зимми» Хачванкян также оформил не без оглядки на опыт конструктивистов (илл. 30). По своей композиционной структуре она перекликается с обложкой книги «Тавриз», созданной художником двумя годами ранее. Основной тон здесь задают контрастные по цвету строгие прямые линии и свободные от изобразительных задач правильные, «конструктивные» формы, которые, пересекаясь и наслаиваясь друг на друга, слегка нарушают общий вертикальный ритм композиции и сообщают ей внутреннюю динамику. Лицо героини романа, словно озаренное фотовспышкой, повторяется дважды, малым и крупным планом, в смелом сопоставлении масштабов. Имитируя то ли фотомонтаж, то ли кинохронику приемом «повторного кадра», в котором высвечивается лицо девушки, Хач-

ռուցվածքային հստակ կազմակերպումը, արձանագրային զեղարվեստական լեզուն, պլաստիկ ձևի ընդհանրացումն այս ոչ մեծ ստեղծագործությանը հաղորդում են մոնումենտալ բնույթ՝ մերձեցնելով ժամանակի խորհրդահայ պլակատի լավագույն մոուլդներին: Այդ զեղարվեստական տպավորությունը պահպանվում է հաջվանքյանի ներկայանկում նախընտրելի՝ կարմրի և սևի խիստ զուգակցմամբ: Պայմանական ողջույնի համար վեր բարձրացված ձեռքերով բանվորների և գեղջկուհու ֆիգուրներն ունեն խորհրդանշական իմաստ՝ լուսաբանելով նրանց անքակտելի միության գաղափարը և, ասես, կանխագուշակելով Վ.Ի.Մուխոմաչի նշանավոր հուշարձանը («Բանվորը և կուտնտեսուհին», 1937), որտեղ այդ գաղափարը կատանա կանոնիկ մարմնավորում:

Խոսելով հաջվանքյանի ստեղծագործական ձեռագրի վրա արվեստի քարոզչական-զանգվածային տեսակների ազդեցության մասին՝ ավելորդ չենք համարում անդրադառնալ նույն 1931 թվականին ստեղծված նրա պլակատներից մեկին (նկ. 94): Թևքերը քշտած և սևեռուն հայացքը գծագրին հառած՝ գծագրական տախտակի վրա է խոնարհվել նավաստու շապիկով և մուգ բանհագուստով երիտասարդ ինժեները, կարմիր գլխաշորով աղջիկը, ըստ երևույթին, նույնպես բանվորներից, լիովին զբաղված է առամանավակով, իսկ նրանց ընկերը, հաշվարկների մեջ խորացած, տախտակի վրա կավճով ինչ-որ բանաձևեր է դուրս բերում: Պատմության տիպական գործող անձինք՝ նոր տեխնիկական մտավորականության պիոներները, կլանված են իրենց գրավիչ գործով և կազմում են կերպարային այն համատեքստը, որն «արդարացնում է» Ստալինի վկայաբերմամբ ամրապնդված համապատասխան կոչը («Բոլորս դեպի տեխնիկա ուսումնասիրող բջիջներ»): Սակայն եթե առաջնորդին հղելու մեջ արտասովոր ոչինչ չկա, ապա նրա հսկայական կարմիր կիսադեմը, որը գրավում է պլակատի կեսը, ակնհայտորեն գերազանցում է իր իմաստային լիազորությունները և հավակնում գլխավոր դերին: Ինչ խոսք, այդ դերն իսկապես «գլխավոր» էր, բայց ինչքան էլ առօրեական թվա պլակատի թեմատիկան, նրանում քարոզչական-զանգվածային արվեստի ոճաբանության զուգակցումը նոր ժամանակների պոետիկայի հետ, երբ վերջ դրվեց զեղարվեստական ձևի բնագավառում ամեն մի նորարարության, ժամանակի շունչն ինքն այդ ստեղծագործությունն օժտում է զեղագիտական ինքնատիպությամբ և զեղարվեստական ներգործուն ուժով²⁹:

Այլ կերպ ընկալվեց ժամանակը հաջվանքյանի՝ 1930-ական թվականների կեսերին ստեղծված մի շարք աշխատանքներում: Խոսքն ամենից առաջ խորհրդահայ գրողներ Վ. Ալազանի և Մ. Արագու գրքերի ձևավորման, ինչպես նաև գրաֆիկայի «փոքր ձևերում» նկարչի որոշ փորձերի մասին է: Տուշով կատարված այս աշխատանքները զեղարվեստական հստակ տպավորության նպատակներով ոճավորված են փայտագրության նմանողությամբ, նմանակում են նրա պլաստիկական լեզուն (նկ. 43, 44, 56–



1920-ական թվականներ:
1920-е годы.



ванкян следует конструктивистам, пытавшимся преодолеть рамки выразительных возможностей изобразительного искусства обращением к формальному арсеналу других искусств, в частности фото- и кинематографии. Только в данном случае мы имеем дело не с реальным синтезом, как, например, в фотомонтажах А. Родченко или Л. Лисицкого, а с его условной имитацией.

Более сдержанной по форме, но не менее выразительной с точки зрения стилевых тенденций своего времени представляется другая работа Хачванкяна – обложка каталога выставки к 11-летию Советской Армении (илл. 31). Четкая структурная организация поверхности листа, лапидарный художественный язык, обобщенность пластической формы придают этому небольшому произведению монументальный характер, сближая его с лучшими образцами советского плаката тех лет. Этот художественный эффект поддерживается строгим сочетанием красного и черного, излюбленным в палитре Хачванкяна. Фигуры рабочих и крестьянки, вскинувших руки в условном приветствии, несут символическую нагрузку, иллюстрируя идею их нерасторжимого союза, и словно предвосхищают знаменитый мухинский монумент (“Рабочий и колхозница”, 1937), в котором идея эта получит каноническое воплощение.

Говоря о влиянии агитационно-массовых видов искусства на творческий почерк Хачванкяна тех лет, излишне обратиться к одному из его плакатов, созданному в том же 1931 году (илл. 94). Засучив рукава и пристально вглядываясь в чертеж, склонился над кульманом молодой инженер, одетый в тельняшку и темную робу; девушка в красной косынке, видимо, тоже из рабочих, сосредоточенно возится с шестеренкой, а их товарищ, углубившись в расчеты, выводит мелом на доске какие-то формулы. Типичные персонажи истории – пионеры новой техни-



Տ. Խաչվանքյանը (վերին աջ անկյունում) Հայաստանի Պետհրատում: Վերևից երկրորդ շարքում (աջից չորրորդը) բանաստեղծ Ե. Չարենցն է, վերևից երրորդ շարքում (աջից երրորդը) հրատարակչության տնօրեն Է. Չոպուրյանը: 1930-ական թվականներ: Դ. Խաչվանքյան (в правом верхнем углу) в Госиздате Армении. Во втором ряду сверху (четвертый справа) поэт Е. Чаренц, в третьем ряду сверху (третий справа) – директор издательства Э. Чопурян. 1930-е годы.

62): Դրանց բնորոշ են հորինվածքների եզրագարդային դասավորությունը, ուրվագծերի ռիթմիկ կրկնությունները, ծավալատարածական հստակ մասնատումները: Բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների կերպարները, որոնցով բնակեցված են այս հորինվածքները, բնորոշ են իրենց խիստ զսպվածությամբ. նրանց շարժումների ու դիրքերի կրկնությունները ծնունդ են միասնական զանգվածի զգացողություն, որի մեջ տարրալուծվում են անհատական գծերը: Եվ եթե բուրյոնովկան ու սվինն ընկալվում են որպես հեղափոխական հանդարտված փոթորիկների արձագանքներ, ապա բրիչը և հանքափորի լապտերը, տրակտորների շարասյուներն ու գործարանային ծխնելույզները երևում են նոր, աշխատանքային հաղթանակների տեսանկյունից: Այս ինքնատիպ «խիստ ոճը», որի ստեղծման մեջ վճռական դերը պատկանում է լակոնիկ, հատու ռիթմով ներթափանցված


ческой интеллигенции, они заняты своим увлекательным делом и составляют тот образный контекст, который “оправдывает” соответствующий призыв (“Все – в ячейки по изучению техники!”), подкрепленный цитатой из Сталина. Но если в ссылке на вождя ничего необычного нет, то его огромный красный профиль, занимающий полплаката, явно превышает свои смысловые полномочия и претендует на главную роль. Что и говорить, эта роль и впрямь была “главной”, но сколь бы расхожей ни казалась тематика плаката, сочетание в нем стилистики агитационно-массового искусства с поэтикой новых времен, положивших конец всякому новаторству в области художественной формы, само дыхание времени наделяет это произведение эстетическим своеобразием и силой художественного воздействия²⁶.

գծանկարին, հիշողության մեջ արթնացնում է խորհրդային արվեստի այնպիսի դասական ստեղծագործություններ, ինչպիսիք են Ալեքսանդր Դեյնեկայի «Պետրոգրադի պաշտպանությունը» (1928) կամ Արա Սարգսյանի «Մայիսյան ապստամբության հերոսներին» հուշարձանը (1931), որտեղ նույնպես իշխում է ընդհանրության և հերոսականության ոգին: Բայց, դիմելով համեմատություններին, առաջին հերթին, այնուամենայնիվ, հարկ է հիշել Դ. Կոջոյանի՝ 1920-ական թվականների վերջերի փայտագրությունները («Ձորագյուղ», «Կարմիր Բանակի մուտքը Կարճան») և, իհարկե, գրքարվեստի բնագավառում նրա նշանավոր աշխատանքը՝ Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ստեղծագործության ձևավորումը (1933), որից հետո, ըստ էության, հանդես եկան խաչվանքյանի նշված աշխատանքները²⁷:

Վերցնենք, օրինակ, Ս. Արագու «Արձակ պոեմները»: Գրքի ձևավորումն աչքի է ընկնում գեղարվեստական մտահղացման ամբողջականությամբ (նկ. 57–62): Չևավորումն իր մեջ ներառում է մեծ թվով նկարներ և ընդգրկում գրքի բոլոր կառուցվածքային տարրերը՝ կազմը, ճակատագարդը, անվանաթերթը, նախանվանաթերթը, գլխազարդերը և վերջնազարդերը: Գեղարվեստական հայեցակարգի միասնությանն է միտված ամեն ինչ՝ գրքի հարմարավետ, գրեթե զրպանի չափսը, որը համապատասխանում է նրանում ընդգրկված կարճառոտ պատմվածքների ծավալին, տպատառերի համակարգի ընտրությունը՝ զուգակցված վերնագրերում թեթև ոճազարդման և հիմնական էջատման հանգիստ ռիթմիկայի հետ, եզրազարդային զրադրվածներն էլի վերին մասում, որոնք, զարդավոր մոտիվները տեքստին կապելով, կազմակերպում են էլի ամբողջ դաշտը, մանրիկ նրբագեղ վերջնազարդերը, որոնք, ոչ մի անգամ չկրկնվելով, գլխազարդերի նման աչքի են ընկնում բացառիկ բազմազանությամբ, վերջապես, լուսանցքների և ցեզուրների լայնությունը, պարբերությամբի սկզբի ազատ տեղերի խորությունը:

Գիտարկենք գրքի կառուցվածքը: Գիրքը բացվում է ճակատագրողով, որի վրա գետեղված է գրողի կիսաֆիգուր դիմանկարը, աչից անվանաթերթն է, որտեղ հեղինակի անունից, գրքի վերնագրից և հրատարակման տվյալներից բացի երևում են արևի և ծաղիկների ոճազարդված փոքր պատկերները: Գրքի հատվածներից յուրաքանչյուրը՝ ներառելով պատմվածքների առանձին շարք, սկսվում է նախանվանաթերթով, որի վրա հատվածի վերնագիրը տրված է այս կամ այն պատմվածքի բնորոշ տեսարանի երիզապատմամբ: Պատմվածքներից յուրաքանչյուրը, իր հերթին, սկսվում է նոր էլից՝ վերևից պաճուճված դրվագավոր ֆրիզի գլխազարդով, և ավարտվում է մանրանկար վերջնազարդով:

Գրքի կառուցման նույն սխեման է օգտագործել Կոջոյանը «Գիրք ճանապարհի» ստեղծագործության մեջ: Եիշտ է, բացի թվարկված տարրերից, այստեղ կան նաև ճիս ձևավորված կազմաշապիկ և ֆորագցներ, սակայն մնացյալում «Արձակ պոեմ-



Դոր Դ. Խաչվանքյանի հետ: 1936 թվական:
С отцом А. Хачванкяном. 1936 год.

Иначе преломляется время в ряде работ Хачванкяна, созданных ближе к середине 1930-х годов. Речь идет прежде всего об оформлении книг армянских советских писателей В. Алазана и М. Арази, а также некоторых опытах художника в области “графики малых форм”. Выполненные тушью, эти работы в целях особого художественного эффекта стилизованы под ксилографию, имитируют ее пластический язык (илл. 43, 44, 56–62). Им присущи фризовое расположение композиций, ритмические повторы контуров, четкие объемно-пространственные членения. Образы рабочих, крестьян и красноармейцев, населяющих эти композиции, типичны в своей строгой сдержанности; повторы их движений и поз рождают ощущение монолитной массы, в которой растворяются индивидуальные черты. И если буденовка и штык воспринимаются как отголоски отшумевших революционных гроз, то кайло и шахтерский фонарь, колонны тракторов и заводские трубы видятся в аспекте новых, трудовых побед. Этот своеобразный “суровый стиль”, в создании которого решающая роль принадлежит лаконичному, пронизанному чеканным ритмом рисунку, вызывает в памяти такие классические произведения советского искусства, как “Оборона Петрограда” (1928) Александра Дейнеки или “Героям Майского восстания” Ара Сарксяна (1931), где также властвует дух общности и героизма. Но, обращаясь к аналогиям, в первую очередь все же следует вспомнить ксилографии А. Коджояна конца 1920-х годов (“Дзорагюх”, “Въезд Красной Армии в Карчеван”) и, конечно, его выдающуюся работу в области книжного искусства – оформление “Книги пути” (1933) Е. Чаренца, вслед за которым, собственно, и появились названные работы Хачванкяна²⁷.

ներ»-ի և «Գրքի» կառուցվածքը միևնույնն է: Ընդհանրություն է նկատվում նաև այդ ձևավորումների գրաֆիկական ոճի մեջ. երկու նկարիչներն էլ դիմում են հորինվածքների եզրագարդային դասավորմանը, գծանկարը ոճավորում են փայտագրության նմանողությամբ՝ փոքր-ինչ պարզեցնելով ուրվագծերը և մոդելավորելով ծավալները զուգահեռ ստվերագծման օգնությամբ, երկուսն էլ թե՛ հիմնական տեքստում, թե՛ վերնագրերում օգտագործում են միատեսակ տպատառեր: Սակայն ամբողջությամբ վերցրած խաչվանքյանի պլաստիկական լեզուն ավելի ռեալիստական է, ձևերի մեկնաբանության մեջ՝ պակաս պայմանական, ֆիզիոլոգների շարժումներն ու դիրքերն այնքան «հերալդիկ» չեն, որքան Կոջոյանի մոտ: Խաչվանքյանին խորթ չեն զուտ «զեղանկարչական» տպավորությունները՝ լուսաստվերի խաղը, տեղ-տեղ՝ տարածության պատրանքային մեկնաբանությունը: Այնպես որ խաչվանքյանի գրաֆիկական ոճի վրա Կոջոյանի գրքային ձևավորումների ազդեցության մասին կարելի է խոսել միայն որոշ սահմաններում: Բացի այդ, չի կարելի մոռանալ, որ «Գիրք ճանապարհին» ստեղծվել է նույն հրատարակչությունում, նույն ստեղծագործական միջավայրում ու մթնոլորտում, ինչ որ «Արձակ պոեմները», ի վերջո, նույնպես Չարենցի ակտիվ մասնակցությամբ: Ի միջի այլոց, Կոջոյանի շրջապատի վարպետների (առաջին հերթին՝ իր և Տ. Խաչվանքյանի) մշակած գրքի ձևավորման այդ յուրահատուկ գրաֆիկական ոճը կարճատև պատմություն ունեցավ. Կոջոյանի մոտ իրեն սպառեց 1930-ական թվականների կեսերին՝ Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեզոներ» ժողովածուի վրա աշխատելուց հետո (1934), մոտավորապես այդ ժամանակ էլ ի չիք դարձավ խաչվանքյանի արվեստում:

Ժամանակակից գրքի ստեղծման հիմնահարցն, առհասարակ, խորապես զբաղեցնում էր Չարենցին, ով, ինչպես հիշում ենք, ամենակտիվ մասնակցություն էր ցուցաբերում գրքերի հրատարակության նախապատրաստման և դրանց զեղարվեստական տեսքի ձևավորման գործում: Գրական աղբյուրի ոգու, նաև՝ ժամանակի ոճային հովերի նկատմամբ հատկապես զգայուն վարպետներ Կոջոյանը և խաչվանքյանը ոչ միայն օգնում էին չարենցյան մտահղացումների իրականացմանը, այլև երբեմն կանխագործում էին, «ընդառաջ գնում դրանց»: Այդ պատճառով, խոսելով խորհրդային գրքի մշակույթի ձևավորման մեջ բանաստեղծի դերի մասին, արժե է նկատի առնել, որ նա ուներ իր գաղափարները «նյութի մեջ» իրականացնելու, ավելին՝ ստեղծագործական երկխոսության բացառիկ հնարավորություններ, երկխոսություն, որի ընթացքում այդ գաղափարները հասունանում և ամրապնդվում էին:

Խաչվանքյանը նախորդ աշխատանքների համեմատությամբ այլ կերպ է ներկայանում մինչհեղափոխական գրողների՝ հայ, ռուս և արտասահմանյան գրականության դասականների ստեղծագործությունների ձևավորումների մեջ: Իմաստային և



Չորր՝ Չակոբ Խաչվանքյանի և մոր՝ Չոհիսիմե Արևշատյանի հետ: 1937 թվական:

Сотцом Акопом Хачванкяном и матерью Рипсимэ Арешатян. 1937 год.

Возьмем, к примеру, “Поэмы в прозе” (1935) М. Арази. Оформление книги отличается цельностью художественного замысла (илл. 57–62). Оно включает большое количество иллюстраций и охватывает практически все структурные элементы книги – переплет, фронтиспис, титульный лист, шмуцтитулы, заставки и концовки. Единству художественной концепции подчинено все – удобный, почти карманный формат книги, соответствующий объему включенных в нее коротеньких рассказов; выбор системы шрифтов с незначительной стилизацией в заголовках и спокойной ритмикой основной верстки; фризовые заставки в верхней части страницы, которые организуют все ее поле, связывая орнаментальные мотивы с текстом; крошечные изящные концовки, которые, не повторяясь ни разу, подобно заставкам, отличаются исключительным разнообразием; наконец, ширина полей и цезур, глубина абзацных отступов.

Рассмотрим конструкцию книги. Она открывается фронтисписом, на котором помещен погрудный портрет писателя, справа – титульный лист, где помимо имени автора, названия и выходных данных книги видны небольшие стилизованные изображения солнца и цветов. Каждый из разделов книги, включающих цикл рассказов, предваряется иллюстрированным шмуцтитлом, на котором заглавие раздела дано в обрамлении характерных сценок из того или иного рассказа. Каждый из них, в свою очередь, начинается с новой страницы, украшенной сверху заставкой в виде орнаментального фриза, и заканчивается миниатюрной концовкой.

Та же схема построения книги используется Коджояном в “Книге пути”. Правда, кроме перечисленных элементов, здесь есть также богато оформленная суперобложка и форзацы, однако в остальном структура “Поэм в прозе” и “Книги” одинакова. Общность наблюдается и в графическом стиле этих оформле-

վեստն ամբողջությամբ, թույլ է տալիս տեսնել ժամանակի գերիշխող միտումը՝ ոճի համապարփակ կերպարանափոխությունը, նորարարության մերժումը՝ հանուն դասական ձևերի: Իսկ դա այդ տարիների խորհրդային արվեստի և հատկապես ճարտարապետության համար արդեն ոչ թե պատահականություն էր, այլ ամբողջ գեղարվեստական մշակույթի գաղափարական-գեղագիտական վերակողմնորոշման հետ կապված խորքային գործընթաց: Կոնստրուկտիվիզմից դեպի նոր կլասիկա՝ ահավասիկ 1930-ական թվականներին խորհրդային ճարտարապետության անցած գլխավոր ուղին, որը յուրովի կրկնեց և զրքային գրաֆիկան, թեև ոճական զարգացման հատկանիշները սրանում չգտան այնպիսի տեսանելի մարմնավորում, ինչպես ճարտարապետության մեջ: Եվ, այնուամենայնիվ, օգտապաշտականի և գեղարվեստականի սահմանագծին (ինչը և Ֆավորսկու կարծիքով մերժեցնում է նրանց) կանգնած այդ երկու արվեստները միատեղվեցին պատմական զարգացման միասնական հունում:

Ստեղծագործական հասունության շրջանում Խաչվանքյանի կատարած աշխատանքների կապակցությամբ հարկ է նշել ևս մեկ միտում: Հայտնի է, որ Չարենցը մեծ նշանակություն էր տալիս հրատարակության ազգային բնույթին և նույնիսկ առաջ էր քաշել նորագույն հայկական գրքի ստեղծման հիմնախնդիրը: «Պետք է գիրքը վերցնես ձեռքը և անմիջապես զգաս, որ հայկական է», – այսպես էր, ըստ Սարյանի, բանաստեղծը ձևակերպել իր միտքը³⁰: Նա զրքարվեստի բարձրագույն նմուշներ էր համարում հայկական միջնադարյան ձեռագրերը, բայց միաժամանակ մերժում էր ձևի հասարակ ոճավորումը՝ կոչ անելով ստեղծագործաբար յուրացնել գեղարվեստական ժառանգությունը: «Մեր նախնիները ոսկի ձեռագրեր են թողել մեզ, – ասում էր Չարենցը: Չի՞ կարելի արդյոք նրանցից սովորել: Իհարկե, կարելի է... Եթե լուրջ մտտենանք, լավ մայեք, վերցնելու շատ բան կգտնենք նրանց մոտ»³¹:

Հայ միջնադարյան գրքի հանդեպ հետաքրքրությունը բեկվեց և Խաչվանքյանի արվեստում, որն այդ իմաստով նույնպես մոտ էր իր ավագ ժամանակակցին՝ Հ. Կոչոյանին: Եիշտ է, նշված միտումը Խաչվանքյանի ստեղծագործության մեջ չհասցրեց ծավալվել և ընդարձակվել, բայց գծագրվեց միանգամայն հստակ: Երկու նկարիչներն էլ հեռու էին ձևերի պարզունակ, մեխանիկական փոխառումից, գիտեին ոճավորման չափը՝ ցուցադրելով պատմական ժառանգության խորապես օրգանական ընկալում և ընթերցում: Հայկական միջնադարի, ինչպես նաև ժողովրդական արվեստի կենարար ակունքներն այդ ժամանակ սնում էին և մյուս վարպետներին, որոնցից յուրաքանչյուրն անցյալի արվեստում գտնում էր իրենը՝ «մեր ժամանակին համահունչ կերպարներ, ոգևորող ստեղծագործական ազդակներ, պատրաստի փայլուն լուծումներ»³²:

Առանձին դեպքերում Խաչվանքյանն ուղղակիորեն դիմում է միջնադարյան արվեստի մոտիվներին: Այսպես, 1931 թվակա-

ստրոն, техническое приспособление для чтения литературного произведения; с другой стороны, она есть пространственное изображение литературного произведения. В этом книга очень похожа на архитектуру – и здание строится для жилья, для практического использования, но тем не менее становится искусством, а верней – не тем не менее, а тем более, так как и в книге, и в архитектуре функция не мешает, а помогает, дает стимул для пространственного пластического оформления»²⁸. С этой точки зрения, перечисленные издания, как и ряд других, оформленных Хачванкяном ближе к середине 1930-х годов, дают больше оснований для сопоставления с зодчеством, нежели такие работы художника, как «Охота на Лалваре», «Говорит радио Алжир» или «Зимми», которые благодаря нестандартному формату и мягкой красочной обложке скорее сродни иллюстрированным журналам. Напротив того, твердый переплет, наличие основных структурных элементов книги (форзацы, шмуц-титуты, заставки, концовки и т. д.), организующих движение читателя в ее пространстве, неспешная ритмика графических элементов оформления в данном случае призваны создать единый пространственно-пластический образ литературного произведения, подобно тому «как в архитектурном интерьере память о входе, вестибюле; ряде комнат дает нам целое внутренности архитектуры...»²⁹.

Конечно, характер и качество издания определял не только художник-оформитель, но и политика издательства в целом, полиграфические возможности и многие прочие факторы. Одна только фигура Чаренца решала в этом деле многое. Кому, как не ему, было ясно, что классиков нельзя издавать так же, как и молодых, зачастую начинающих писателей, по счастью включенных в издательский план. Но для нас важно то, что искусство Хачванкяна, как и в целом искусство книги, позволяет наблюдать ключевую тенденцию того времени – универсальную метаморфозу стиля, отвергшего новаторство во имя классических форм. А это для советского искусства и особенно архитектуры тех лет уже не случайность, но глубинный процесс, связанный с идейно-эстетической переориентацией всей художественной культуры. От конструктивизма к неоклассике – таков был магистральный путь, проделанный советской архитектурой в 1930-е годы. Путь этот по-своему повторила и книжная графика, хотя черты стилиевой эволюции не нашли в ней такого зримого воплощения, как в зодчестве. И все же эти два искусства, стоящие на стыке утилитарного и художественного (что и роднит их, по мысли Фаворского), сошлись в едином русле исторического развития.

В связи с работами Хачванкяна, созданными в период его творческой зрелости, уместно сказать еще об одной тенденции. Как известно, Чаренц придавал большое значение националь-

մին նա ձևավորում է Վարդգես Սուրենյանցի հետմահու ցուցահանդեսի կատալոգը՝ շապկի վրա զետեղելով ասես Գեղարդի կամ Նորավանքի քարագործ վարպետներից մեկի ձեռքով փորագրված զարդավոր ֆրիզ (նկ. 34): Միևնույն ոճով են արված գլխատառն ու տպատառերը՝ նրբագեղ և խիստ: Կիրառված է ասես կրկնակի հղման եղանակը՝ շապկի պլաստիկան միջնադարյան վարպետներին է դիմում հայ արվեստի ու ճարտարապետության հիանալի գիտակ Սուրենյանցի միջոցով, որն ինքն էլ լրջորեն զբաղվում էր դրանցով որպես նկարիչ և հետազոտող: Մեկ այլ աշխատանքում («Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ժողովածուն», գլխատառ, նկ. 35), մեզ ընկղմելով արևելյան քնարերգության կերպարային աշխարհը, խաչվանքյանը վերածնունդ է հայկական մանրանկարչության պաճուճագարո շքեղությունը՝ ծառի ճյուղերին թառած թռչունների, տերևի և երեքնուկի, խաղողի ողկույզների և նռան պտուղների նախշով, ուր վարպետորեն ներգրավված է ոչ միայն գլխատառը, այլև աշուղի գործիքը՝ թառը: Միջնադարյան ծաղկողների նման գրքի կառուցվածքի նշանակալի գրաֆիկական տարրերն առանձնացնելու նպատակով նկարիչն օգտագործում է դեկորատիվ անվիճելի ներգործությամբ օժտված գույն՝ հագեցած կարմիր: Հավելենք, որ այդ ժամանակաշրջանի խորհրդահայ, այդ թվում՝ խաչվանքյանի ձևավորած, գրքերի տպատառային համակարգը գործնականորեն խարսխված է միջնադարյան տառատեսակների վրա:

Բայց տվյալ դեպքում էականը ոչ թե արտաքին նմանություններն են, որոնք խաչվանքյանի արվեստում այնքան էլ շատ չեն, այլ ավելի շուտ գրքի՝ որպես գեղարվեստական առարկայի, ամբողջական ընկալումը: Հենց դա էր սովորեցրել Ֆավորսկին և դրան էր ձգտում Չարենցը: Գրքի բնագավառում խաչվանքյանի լավագույն աշխատանքները ցուցադրում են ավանդույթների և նորարարության զուգորդումը և միանգամայն համապատասխանում բանաստեղծի ձևակերպած «գերխնդիրին»։ վերցնելով գիրքը՝ անսխալ զգում ես դրա ազգային բնույթը:

Վերլուծելով խաչվանքյանի ժառանգությունը գրքի գեղարվեստական ձևավորման ասպարեզում՝ մենք անխուսափելիորեն համեմատում ենք նրան Հ. Կոջոյանի հետ, որի ստեղծագործությունը 1920–1930-ական թվականների հայկական գրքային գրաֆիկայի ուրույն չափանիշն է: Այս մոտեցումը միանգամայն օրինաչափ է, քանի որ նրանց ընդհանրություններն ակնհայտ են: Սակայն մեր դեպքում կարևոր է հասկանալ, թե ո՞րն է խաչվանքյանի ուրույն ներդրումը խորհրդահայ արվեստի և գրահրատարակչության մշակույթի զարգացման մեջ: Իսկ այդ ավանդը բավական ծանրակշիռ է: Ստանալով նկարիչ-պոլիգրաֆիստի կրթություն երկրի լավագույն ուսումնական հաստատություններից մեկում, անցնելով պրոֆեսիոնալ վարպետության դպրոց Ֆավորսկու անփոխարինելի դեկավարությամբ՝ խաչվանքյանն, ըստ էության, դարձավ ՎԽՈՒՏԵՄՍՍ-ի գեղագիտական սկզբունք-



Վնոջ՝ Եվգենիա Տեր-Խաչատրյանի և դստեր՝ Էվելինայի հետ: 1931 թվական:

С супругой Евгенией Тер-Хачатрян и дочерью Эвелиной. 1931 год.

